



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

Զեկույց

**ՀԸԳՀ-ի շրջանակում Հայաստանի ստանձնած պարտավորությունները
հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման
ուղղությամբ**

Հեղինակ՝ Մուշեղ Հովսեփյան

Երևան 2025



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Մուշեղ Հովսեփյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



1. Երախտիքի խոսք

Հեղինակը խորին երախտագիտություն է հայտնում բոլոր այն անհատներին և կազմակերպություններին, որոնք իրենց ժամանակը, փորձը և գիտելիքները ներդրել են այս զեկույցի պատրաստման ընթացքում:

Հատուկ շնորհակալություն հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք խորհրդակցությունների և հարցազրույցների ընթացքում մեծահոգաբար կիսվել են սեփական անձնական փորձառությամբ և տեսլականով:

Շնորհակալություն նաև վավերացման աշխատաժողովի մասնակիցներին, որի ընթացքում տարբեր շահագրգիռ կողմեր աջակցեցին եզրակացությունների հստակեցմանը և առաջարկությունների կատարելագործմանը:

Հեղինակը հատկապես երախտապարտ է «GOPA Partners in Action for Change and Engagement» (GOPA PACE) թիմին՝ նախագծի իրականացման ամբողջ ընթացքում ցուցաբերած աջակցության, համակարգման և մասնագիտական ուղղորդման համար:



2. Բովանդակություն

1. Երախտիքի խոսք.....	3
2. Բովանդակություն.....	4
3. Հակիրճ նկարագրություն.....	5
4. Ներածություն և նախապատմություն.....	6
5. Մեթոդաբանություն.....	9
Սահմանափակումներ	10
6. Մոնիթորինգի արդյունքներ և հիմնական դիտարկումներ.....	12
Աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում	12
ՀԸԳՀ-ի համապատասխան դրույթները	12
Հիմնական բացահայտումներ	12
Եզրակացություններ և առաջարկություններ	16
Զբաղվածություն և ներառական աշխատաշուկաներ	19
ՀԸԳՀ-ի համապատասխան դրույթները	19
Հիմնական բացահայտումներ	19
Եզրակացություններ և առաջարկություններ	24
Սոցիալական երկխոսություն և սոցիալական գործընկերների մասնակցության ընդլայնում	28
ՀԸԳՀ-ի համապատասխան դրույթները	28
Հիմնական բացահայտումներ	28
Եզրակացություններ և առաջարկություններ	32
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն	35
ՀԸԳՀ-ի համապատասխան դրույթները	35
Հիմնական բացահայտումներ	35
Եզրակացություններ և առաջարկություններ	37
7. Վերջնական եզրակացություններ.....	40
9. Հավելվածներ.....	42
Հավելված 1. Օգտագործված ազգային օրենսդրական փաստաթղթերի ցանկ	42
Հավելված 2. Մոնիթորինգի մատրից	65

3. Հակիրճ նկարագրություն

Սույն զեկույցում ներկայացված են Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական միության հետ ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) 84-ից 88-րդ հոդվածների իրականացման անկախ մոնիթորինգի արդյունքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման խնդրին: Վերլուծությունը կառուցված է չորս թեմատիկ ոլորտների շուրջ՝ աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում, զբաղվածություն և ներառական աշխատաշուկաներ, սոցիալական երկխոսության խթանում և քաղաքացիական հասարակության ներգրավում, ինչպես նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն:

Զնայած այն հանգամանքին, որ Հայաստանը բարեփոխումներ է ձեռնարկել սոցիալական պաշտպանության և զբաղվածության ոլորտներում՝ այդ ջանքերը դեռևս բավականաչափ ներառական չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամության վերաբերյալ նկատառումները գրեթե ներառված չեն հիմնական ռազմավարական փաստաթղթերում, նպաստների մակարդակը կենսապահովման շեմից ցածր է, իսկ համակարգային խոչընդոտները շարունակում են սահմանափակել մուտքը աշխատաշուկա, հանրային ծառայություններ և որոշումների կայացման գործընթացներ:

Թեպետ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված են խտրականությունը բացառող նորմեր, դրանց կիրառման մեխանիզմները շարունակում են մնալ թույլ: Հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված զբաղվածության քվոտավորման համակարգը լիարժեք չի գործում, իսկ աջակցության ծրագրերը հաճախ մատչելի կամ հարմարեցված չեն: Մասնակցության մեխանիզմները բավարար չափով չեն օգտագործվում, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները հաճախ դուրս են մնում քաղաքականության մշակման գործընթացներից: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում բացակայում է համակարգված մոտեցումը, մասնավոր հատվածի պրակտիկայում էլ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն առանձնապես չի արտացոլվում:

Զեկույցը եզրակացնում է, որ Հայաստանի ջանքերը՝ չնայած որոշ դրական քայլերին, չեն բավարարում ՀԸԳՀ-ով և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով ստանձնված պարտավորություններին: Անհրաժեշտ է ուժեղացնել իրավակիրարկումը, հաստատությունների միջև համակարգումը և քաղաքականության ներառական մշակումը: Առաջնահերթ առաջարկությունները վերաբերում են հաշմանդամության վերաբերյալ տվյալների համակարգերի կատարելագործմանը, քաղաքականության մշակման բոլոր փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների լիարժեք մասնակցության ապահովմանը, ինչպես նաև սոցիալական ներառման վրա կենտրոնացած ազգային կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակի ձևավորումը:

4. Ներածություն և նախապատմություն

Եվրոպական միության (ԵՄ) և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ)¹ ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերին և մասնակի ուժի մեջ է մտել 2018 թվականի հունիսից: Այն իրենից ներկայացնում է կողմերի միջև քաղաքական, տնտեսական և սոցիալական համագործակցության կարևորագույն շրջանակ՝ փոխարինելով 1999 թվականին ստորագրված Գործընկերության և համագործակցության համաձայնագրին (ԳՀՀ)² և նոր փուլ նշանավորելով ԵՄ-Հայաստան հարաբերություններում: Համաձայնագրով նախատեսվում է ոլորտային լայն համագործակցություն՝ միաժամանակ հարգելով Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակում ստանձնած պարտավորությունները: Ի տարբերություն լիարժեք Աստղացման համաձայնագրի կամ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ)³, որոնց միացել են Արևելյան գործընկերության (ԱԳ) որոշ երկրներ, ՀԸԳՀ-ն մշակվել է այնպես, որ առավել սերտ մերձեցում ապահովի ԵՄ քաղաքականություններին և չափորոշիչներին՝ միաժամանակ հաշվի առնելով Հայաստանի առկա առևտրային պարտավորությունները:

Կառավարման և քաղաքականության իրականացման համատեքստում՝ ՀԸԳՀ-ի կիրարկման գործընթացն ուղղորդվում է ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ ընդունված ճանապարհային քարտեզով⁴: Սույն ճանապարհային քարտեզը ծառայում է որպես իրավական ներդաշնակեցման և ինստիտուցիոնալ բարեփոխումների կառուցվածքային գործողությունների ծրագիր՝ ուրվագծելով Հայաստանի պարտավորությունները ՀԸԳՀ-ում ներառված տարբեր ոլորտներում: Այն, սակայն, թեև նպաստում է կառավարման և տնտեսական բարեփոխումների ավելի լայն շրջանակին, բայց ուղղակիորեն չի անդրադառնում ՀԸԳՀ-ի սոցիալական դրույթներին, այդ թվում նրանց, որոնք առնչվում են զբաղվածության, սոցիալական պաշտպանության, հակախտրականության և շահագրգիռ կողմերի ներգրավման հարցերին: Սա նպաստել է հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառական

¹ Մի կողմից՝ Եվրոպական միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, Եվրոպական միության պաշտոնական տեղեկագիր, L23/4, 2018 թ. հունվարի 26, https://eur-lex.europa.eu/eli/agree_internation/2018/104/oj:

² Մի կողմից՝ Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիր, Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագիր, L 239, 1999 թ. սեպտեմբերի 9, 3-50, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX%3A21999A0909%2801%29>:

³ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրեր, Եվրոպական հանձնաժողով, Access2Markets, 2025 թ. ապրիլի 16, <https://trade.ec.europa.eu/access-to-markets/en/content/deep-and-comprehensive-free-trade-agreements>:

⁴ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2019 թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153164>:

քաղաքականության իրականացման, աշխատաշուկայի մատչելիության և քաղաքացիական հասարակության մասնակցության ոլորտներում բացթողումների առաջացմանը:

Չնայած օրենսդրական բարեփոխումների ուղղությամբ առաջընթացին՝ դեռևս առկա են դժվարություններ՝ իրավական պարտավորությունները համակարգային փոփոխությունների վերաձելու հարցում: Հայաստանը մշակել է օրենքներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների⁵, զբաղվածության⁶ և սոցիալական աջակցության⁷ վերաբերյալ, սակայն դրանց կիրարկման ուղղությամբ հետևողականություն չի նկատվում: Չնայած որոշ դրույթներ սահմանում են աշխատատեղերի քվոտաներ, խտրականության դեմ պայքարի միջոցներ և սոցիալական նպաստներ, դրանք դեռևս ամբողջությամբ ինտեգրված չեն Հայաստանի տնտեսական և աշխատաշուկայի քաղաքականություններում: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ կառավարության համագործակցության ուղղությամբ ևս նկատվում է անհետևողականություն՝ քաղաքականության մշակման և օրենսդրական գործընթացներին կառուցվածքային մասնակցության սահմանափակ հնարավորություններով:

Հայաստանի՝ Եվրոպական միության հետ համագործակցությունն առավել խորանալուն գույժընթաց՝ ՀԸԳՀ-ն շարունակում է մնալ քաղաքականությունների մոտարկման և ինստիտուցիոնալ բարեփոխումների հիմնական մեխանիզմը: Աշխարհաքաղաքական փոփոխությունների, տնտեսական նկատառումների և կառավարման գերակայությունների ազդեցության ներքո ձևավորվող ԵՄ-Հայաստան հարաբերությունների շարունակական զարգացումը ներկայացնում է թե՛ հնարավորություններ, թե՛ մարտահրավերներ՝ ՀԸԳՀ դրույթների լիակատար իրականացման ապահովման առումով: Սոցիալական քաղաքականության ամրապնդումը, աշխատաշուկայի հասանելիության բարելավումը և քաղաքացիական հասարակության մասնակցության խթանումը վճռական նշանակություն ունեն, որպեսզի ՀԸԳՀ դրույթները վերածվեն ԵՄ չափանիշներին և Հայաստանի միջազգային պարտավորություններին համապատասխան էական բարեփոխումների:

Այս համատեքստում սույն **ուսումնասիրության նպատակը** գնահատելն է, թե որքանով է Հայաստանի կողմից ՀԸԳՀ 84-88-րդ հոդվածների իրականացումը գործնականում նպաստում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը: Գնահատումը կենտրոնանում է չորս փոխկապակցված ոլորտների վրա՝ աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում, ներառական աշխատաշուկաներ, շահագրգիռ կողմերի մասնակցություն և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն: Ուսումնասիրությունը նպատակ ունի վերլուծելու, թե որքանով են առկա քաղաքականությունները և ինստիտուցիոնալ պրակտիկաները համապատասխանում ՀԸԳՀ-

⁵ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2021 թ. մայիսի 5-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196661>:

⁶ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2013 թ. դեկտեմբերի 11-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199715>:

⁷ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2024 թ. հոկտեմբերի 24-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199657>:



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

ի և ՄԱԿ-ի կոնվենցիայի սկզբունքներին, բացահայտելու սոցիալական ներառման խոչընդոտները և ներկայացնելու հիմնավոր առաջարկություններ՝ աջակցելու Հայաստանի կողմից իր միջազգային պարտավորությունների կատարմանը և ավելի ներառական հասարակություն կառուցելու ջանքերին:

5. Մեթոդաբանություն

Սույն զեկույցը հիմնված է իրավունքահենք քաղաքականության մոնիթորինգի մոտեցման վրա, որը կոչված է գնահատելու Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական միության հետ ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) 84-ից 88-րդ հոդվածների ներքո ստանձնված պարտականությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը: Մեթոդաբանությունը կառուցված է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային համապատասխան, և արտացոլում է սոցիալական ներառման մոնիթորինգի լավագույն փորձը:

Վերլուծությունը կառուցված է ՀԸԳՀ-ից ուղղակիորեն բխող չորս փոխկապակցված թեմատիկ ոլորտների շուրջ՝ աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում, զբաղվածություն և ներառական աշխատաշուկաներ, սոցիալական երկխոսություն և քաղաքացիական հասարակության ներգրավում, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն: Նշված ոլորտները համընկնում են 84-88-րդ հոդվածների հետ և աջակցվում են երկկողմանի (twin-track) մոնիթորինգի մոտեցմամբ՝ ուսումնասիրելով թե՛ ընդհանուր քաղաքականությունները, թե՛ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հատուկ միջոցառումները՝ ապահովելով համապարփակ գնահատում:

Մեթոդաբանությունն օրենսդրության և քաղաքականությունների վերլուծությունը համադրում է կիրարկման փաստահեն գնահատման հետ: Վերլուծության հիմքը Հավելված 2-ում ներկայացված մանրամասն մոնիթորինգի մատրիցն է: Այն ուղղորդել է գործընթացը՝ նկարագրելով մոնիթորինգի թեմատիկ հարցերը, գնահատման չափանիշները և ցուցիչները, որոնք կիրառվել են գնահատված չորս ոլորտների շրջանակներում: Նշված մատրիցը ձևավորել է տվյալների հավաքագրման և գնահատման վերլուծական հիմքը՝ հնարավոր դարձնելով ինչպես պաշտոնական իրավական համապատասխանության, այնպես էլ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ներառման վրա քաղաքականության գործնական ազդեցության կառուցվածքային ուսումնասիրությունը:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է 2025 թվականի հունվար-ապրիլ ժամանակահատվածում՝ ներառելով երեք հիմնական մեթոդ: Նախ, կատարվել է համապարփակ գրասենյակային ուսումնասիրություն, որի շրջանակում վերլուծվել են ազգային օրենսդրությունը, ՀԸԳՀ դրույթները, կառավարության որոշումները և քաղաքականության ռազմավարությունները: Վերլուծության ենթարկված առանցքային փաստաթղթերն են՝ ՀԸԳՀ համաձայնագիրը և դրա կիրարկման ճանապարհային քարտեզը (2019 թ.), Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագիրը, սոցիալական պաշտպանության վերաբերյալ համապատասխան հրամանագրերը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հակախտրականության իրավական փաստաթղթերը: Սույն ուսումնասիրությունը լրացվել է հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, միջազգային գործակալությունների և պայմանագրային մարմինների պատրաստած զեկույցների վերլուծությամբ:

Երկրորդ, պաշտոնական տեղեկատվության հարցումներ են ներկայացվել պետական կառույցներ, այդ թվում՝ Էկոնոմիկայի նախարարությանը և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Այս հարցումների նպատակն էր ստանալ պաշտոնական տվյալներ և ներքին փաստաթղթեր, որոնք վերաբերում են ՀԸԳՀ-ի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված քաղաքականության իրականացմանը: Այն դեպքերում, երբ պատասխաններ են ստացվել, տեղեկությունն օգտագործվել է արդյունքները ստուգելու և հանրային տվյալների հասանելիության բացերը լրացնելու համար:

Երրորդ, խորհրդակցություններ են անցկացվել մի շարք շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական մարմինների, Ազգային ժողովի, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների հետ: Այս կիսաձևայնացված հարցազրույցները տրամադրել են քաղաքականության իրականացման համատեքստը և օգնել են վավերացնելու գրասենյակային ուսումնասիրության արդյունքները՝ հիմնվելով կենսափորձի վրա: Բացի այդ, կազմակերպվել է տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ վավերացման աշխատաժողով, որտեղ ներկայացվել և քննարկվել են նախնական արդյունքները: Այս հանդիպման ընթացքում ստացված հետադարձ արձագանքները հիմք են հանդիսացել վերջնական վերլուծության համար: Կատարվել են նաև համապատասխան լրացումներ՝ գեկույցի ճշգրտությունն ու ամբողջականությունը բարելավելու համար:

Վերլուծական առումով՝ գեկույցը հիմնված է թեմատիկ սինթեզի, բացթողումների վերլուծության և քաղաքականության ազդեցության գնահատման վրա: Թեմատիկ սինթեզն օգտագործվել է ՀԸԳՀ-ի չորս թեմատիկ ոլորտներում կրկնվող խնդիրներն ու հնարավորությունները բացահայտելու համար: Բացթողումների վերլուծությունը հնարավորություն է տվել համեմատել ՀՀ ներկայիս քաղաքականությունները և ՀԸԳՀ-ի ու ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակներում նրա ստանձնած իրավական պարտավորությունները: Քաղաքականության ազդեցության գնահատումը կենտրոնացել է այն հարցի վրա, թե որքանով են ազգային համակարգերը խթանում սոցիալական ներառումը, ֆինանսական ապահովությունը, հավասար աշխատանքի հնարավորությունները և մասնակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Սահմանափակումներ

Մոնիթորինգի գործընթացը բախվել է մի շարք սահմանափակումների, որոնք, թեև էականորեն չեն ազդել ընդհանուր վերլուծության վրա, այնուամենայնիվ ձևավորել են որոշակի բաղադրիչների խորությունն ու շրջանակը: Այս սահմանափակումները բխում էին ինչպես կառուցվածքային, այնպես էլ գործնական հանգամանքներից:

Մեթոդաբանական նկատառումներից մեկն առնչվում է ՀԸԳՀ-ի դիտարկվող հոդվածների լայն և երբեմն արձակ բնույթին: 84-ից 88-րդ հոդվածները սահմանում են համագործակցության կարևոր ուղղություններ, սակայն դրանք միշտ չէ, որ ներառում են չափելի ցուցանիշներ կամ ակնկալվող արդյունքներ: Արդյունքում, համապատասխանությունը և կիրարկումը գնահատելու համար անհրաժեշտ էր որոշակի մեկնաբանական վերլուծություն: Այս խնդիրը

լուծելու համար մշակվել է ՀԸԳՀ դրույթների և միջազգային չափորոշիչների, մասնավորապես՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հիման վրա հարմարեցված մոնիթորինգի շրջանակ՝ համապատասխանությունը և գործնական ազդեցությունը գնահատելու համար:

Մյուս խնդիրը կապված է հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վարչական տվյալների առկայության և համապատասխանության հետ: Թեև որոշ համապատասխան տվյալներ հասանելի էին, կառույցից կախված՝ դրանք ունեին հատվածական բնույթ կամ չունեին խորը վերլուծության համար անհրաժեշտ տարանջատման մակարդակ, հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ աղքատությունը, զբաղվածությունը և ծառայությունների մատչելիությունը: Որոշ դեպքերում պաշտոնական աղբյուրներում արձանագրվել են հակասություններ՝ առանց անկախ աղբյուրից ստուգման հնարավորության: Բացի այդ, ըստ տարիքի, սեռի, տարածաշրջանի կամ հաշմանդամության տեսակի ապախոշորացված տվյալները սահմանափակ են, ինչը խաթարում է բացառման հատվողականության օրինաչափությունները ուսումնասիրելու հնարավորությունը:

Որոշակի սահմանափակումներ են առաջացրել նաև ինստիտուցիոնալ գործոնները: Օրինակ՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը շարունակում է լինել քաղաքականության ոլորտ, որտեղ չկա հստակ ինստիտուցիոնալ պատասխանատվություն: Էկոնոմիկայի նախարարությունը երբեմն հղում է կատարել ԿՄՊ-ին սոցիալական քաղաքականության համատեքստում, սակայն ոչ մի մարմին պաշտոնական լիազորություն չունի ԿՄՊ-ին վերաբերող շրջանակներ մշակելու կամ վերահսկելու համար: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, չնայած ներառման քաղաքականություններում իր լիզորված լինելուն, իր կանոնադրությամբ պատասխանատվություն չի կրում ԿՄՊ-ի համար: Այս անորոշությունը դժվարացրել է ՀԸԳՀ-ի ներքո ստանձնված պարտավորություններին համապատասխան պատասխանատու գործարար պրակտիկայի խթանման պետական համակարգված ջանքերի գնահատումը:

Անկախ նշված մարտահրավերներից՝ փաստաթղթային վերլուծության, ինստիտուցիոնալ հաղորդակցության և շահագրգիռ կողմերի մասնակցության համադրությունը ամուրի հիմք դարձավ սույն զեկույցում ներկայացված եզրակացությունների համար: Մեթոդաբանությունն ապահովում է, որ գնահատումը հիմնված լինի ապացույցների և միջազգային չափանիշների վրա ու ուշադրություն դարձնի ինչպես համակարգային քաղաքականության խնդիրներին, այնպես էլ հաշմանդամություն ունեցող անձանց կենսափորձին Հայաստանում:

6. Մոնիթորինգի արդյունքներ և հիմնական դիտարկումներ

Աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում

ՀԸԳՀ-ի համապատասխան դրույթները

ՀԸԳՀ 84-րդ հոդվածում նշվում է.

«Կողմերը պետք է ամրապնդեն իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը, զբաղվածության քաղաքականությունը, աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը, սոցիալական երկխոսությունը, սոցիալական պաշտպանությունը, սոցիալական ներգրավվածությունը, կանանց և տղամարդկանց հավասարությունը և խտրականության բացառումը խթանելուն՝ դրանով նպաստելով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական համերաշխության ընդլայնմանը, կայուն զարգացմանը և կյանքի որակի բարելավմանը»:

ՀԸԳՀ 85-րդ հոդվածի «ա» ենթակետում նշվում է.

«Տեղեկությունների և լավագույն գործելակերպի փոխանակման վրա հիմնված համագործակցությունը կարող է ընդգրկել հետևյալ ոլորտներում հասցեագրման ենթակա որոշակի թվով հարցեր՝ (ա) աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում»:

Հիմնական բացահայտումներ

Հայաստանը բարեփոխումներ է ձեռնարկել իր աղքատության կրճատման ռազմավարություններում և սոցիալական պաշտպանության մեխանիզմներում՝ փորձելով կատարել ՀԸԳՀ-ի շրջանակում իր ստանձնած պարտավորություններն ու ընդլայնել սոցիալական համերաշխությունը: Կառավարությունը ներդրել է սոցիալական աջակցության գնահատման նոր մեթոդաբանություն՝ անցնելով կարիքահենք մոտեցման⁸: Այնուամենայնիվ, ինչպես նկարագրված է ստորև, այս բարեփոխումները դեռևս անբավարար են՝ հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացած կոնկրետ խոչընդոտները լուծելու համար, քանի որ դրանք չեն ներառում տնտեսական անվտանգության և անհրաժեշտ ծառայությունների հասանելիություն ապահովող կառուցվածքային, ներառական շրջանակ:

Այնժամ, երբ Հայաստանում աղքատության մակարդակը 2021 թվականին կազմել է 26.5%⁹, հաշմանդամություն ունեցող անձինք գործ ունեն զգալիորեն ավելի բարձր մակարդակի

⁸ ««Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2024 թ. հոկտեմբերի 24-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199679>:

⁹ «Աղքատության և հավասարության համառոտ պատկերը Հայաստանում» զեկույց, Համաշխարհային բանկ, 2023 թ. ապրիլ, հասանելի է 2025 թ. ապրիլի 16-ին:

աղքատության և սոցիալական մեկուսացման հետ¹⁰: Գնաճի բարձր մակարդակը, ֆորմալ զբաղվածության հասանելիության բացակայությունը և սոցիալական ապահովության ցանցի թերզարգացածությունը շարունակում են սրել հաշմանդամություն ունեցող անձանց ֆինանսական անապահովությունը: Անկախ այս մտահոգություններից՝ հաշմանդամության հետ կապված աղքատության ազդեցության գնահատում չի իրականացվել, կառավարությունն էլ, իր հերթին, չի մշակել տվյալների հավաքագրման համակարգ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և մեծահասակների շրջանում աղքատության մակարդակը գնահատելու համար: Ապախոշորացված տվյալների բացակայությունը¹¹ և հաշմանդամության ու աղքատության վերաբերյալ պարբերական զեկույցների բացակայությունը խոչընդոտում են կառավարության՝ արդյունավետ և նպատակային քաղաքականություն մշակելու կարողությունը:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում 2024 թվականին կատարված փոփոխություններով¹² ներդրվեց սոցիալական աջակցության իրավունքը որոշելու՝ ընտանիքի եկամտի և տնային տնտեսության կազմի վրա հիմնված նոր մեթոդաբանություն (փորձնական կիրառվելով 2 մարզերում): Սակայն այս բարեփոխումները հաշվի չեն առել հաշմանդամության հետ կապված առանձնահատուկ ֆինանսական բեռը և շարունակում են կիրառել տնտեսական մեկուսացումն ուժեղացնող հնացած դասակարգումներ:

- Ընտանիքի խնամառու անդամ են համարվում միայն ծանր կամ խորը ֆունկցիոնալության սահմանափակումներ ունեցող անձինք, մինչդեռ միջին աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք դուրս են մնում լրացուցիչ աջակցություն ստացողների շրջանակից: Այս թյուր պատկերացումը ելնում է այն կանխավարկածից, թե միջին աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք զբաղվածության հետ կապված որևէ խոչընդոտի չեն բախվում՝ չնայած հակառակը հաստատող հստակ ապացույցներին (հոդված 15.3):
- Օրենքը եկամուտ է վերագրում գործազուրկ անձանց, ինչը նշանակում է, որ եթե հաշմանդամություն ունեցող անձը չի աշխատում, կառավարությունը ենթադրում է, որ նա վաստակում է որոշակի գումար՝ անկախ իր ունեցած իրական եկամուտից: Սրանով արհեստականորեն մեծացվում է տնային տնտեսության գնահատվող եկամտի չափը՝ մարդկանց հաճախ զրկելով անհրաժեշտ ֆինանսական աջակցությունից (հոդված 15.3):
- Հաշմանդամության նպաստները հաշվարկվում են որպես ընտանեկան եկամուտ, ինչը նվազեցնում է լրացուցիչ աջակցության իրավունքը՝ չնայած այն հանգամանքին, որ այս

https://databankfiles.worldbank.org/public/ddpext_download/poverty/987B9C90-CB9F-4D93-AE8C-750588BF00QA/current/Global_POVEQ_ARM.pdf:

¹⁰ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը» զեկույց, Համաշխարհային բանկ, թարմացվել է 2025 թ. ապրիլին, հասանելի է 2025 թ. ապրիլի 16-ին: https://databankfiles.worldbank.org/public/ddpext_download/poverty/987B9C90-CB9F-4D93-AE8C-750588BF00QA/current/Global_POVEQ_ARM.pdf:

¹¹ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2024», ՀՀ վիճակագրական կոմիտե (Արմստատ), հասանելի է 2025 թ. ապրիլի 16-ին, https://armstat.am/file/article/poverty_2024_en_00.pdf:

¹² «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2024 թվականին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից:

նպաստները բավարար չափով չեն ծածկում հաշմանդամության հետ կապված ծախսերը (հավելված 1, կետ 32)¹³:

Բացի այդ, Հայաստանում աղքատության կրճատումը մեծապես կենտրոնացնում է միայն եկամտի մակարդակի վրա և հաշվի չի առնում դրա վրա ազդող մյուս գործոնները, ինչպիսիք են խտրականությունը, ծառայությունների հասանելիության բացակայությունը և կրթությունից ու աշխատանքից համակարգային մեկուսացումը: Մոցիալական աջակցության ծրագրերն անհատականացված չեն և հաշվի չեն առնում անձի առանձնահատուկ հանգամանքները՝ հիմնված սոցիալական աշխատանքի գնահատականների վրա: Այդպիսի անհատականացված մոտեցման բացակայության արդյունքում հաշմանդամություն ունեցող շատ անձինք հայտնվում են ուշադրությունից դուրս՝ չկարողանալով ստանալ անհրաժեշտ աջակցություն:

Աղքատության առնչությամբ կառավարության հանրային հաղորդակցությունը նույնպես գուրկ է մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումից¹⁴: Պաշտոնական խոսույթը գործազուրկների, այդ թվում՝ առերևույթ հաշմանդամություն ունեցողների նկատմամբ հաճախ օգտագործում է խարանափորող և մեղադրական լեզու¹⁵՝ ամրապնդելով հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց տնտեսական մասնակցության վերաբերյալ բացասական կարծրատիպերը: Մա հաշմանդամություն ունեցող անձանց էլ ավելի է օտարում սոցիալական ծրագրերին և գրադվածության նախաձեռնություններին մասնակցելուց¹⁶:

Հաշմանդամություն ունեցող անձինք Հայաստանում ստանում են հաշմանդամության նպաստներ՝ հիմնվելով «Ֆունկցիոնալության սահմանափակման» աստիճանի վրա, սակայն այդ վճարումները բավարար չեն ֆինանսական անվտանգությունն ապահովելու համար: 2024 թվականին հաշմանդամության նպաստի չափը¹⁷ կազմել է՝

- ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում՝ 39 հազար ՀՀ դրամ (մոտ 100 ԱՄՆ դոլար)։
- ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում՝ 37,5 հազար ՀՀ դրամ (մոտ 96 ԱՄՆ դոլար)։

¹³ ՀՀ կառավարության 2025 թ. հունվարի 9-ի N 27-Ն որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205191>:

¹⁴ «Աղքատության, գրադվածության և աշխատանքային իրավունքի հարցերի մասնակցային ուսումնասիրություն. Գեղարքունիքի և Շիրակի մարզերի օրինակը» հետազոտության զեկույց, «Սոցիոսկոպ» ՀԿ, Երևան, 2024 թ. (հայերեն), https://socioscope.am/wp-content/uploads/2024/01/Research_31.12_web-1.pdf:

¹⁵ «Անապահովության գնահատման նոր համակարգի գործարկումը մեկնարկելու է Կոտայքի և Սյունիքի մարզերից՝ 2025 թ. մարտի 17-ից», ՀՀ կառավարության պաշտոնական լրահոս, 2025 թ. հունվարի 9, հասանելի է 2025 թ. ապրիլի 16-ին, <https://www.primeminister.am/en/press-release/item/2025/01/09/Cabinet-meeting/>:

¹⁶ Whittle, H. J., K. Palar, N. A. Ranadive, J. M. Turan, M. Kushel, and S. D. Weiser. "The Land of the Sick and the Land of the Healthy: Disability, Bureaucracy, and Stigma among People Living with Poverty and Chronic Illness in the United States." *Social Science & Medicine* 190 (October 2017): 181–89. <https://doi.org/10.1016/j.socscimed.2017.08.031>:

¹⁷ «Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու ռեպրում նպաստների և թաղման նպաստի չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2013 թ. դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=179721>:

- ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում՝ 36 հազար ՀՀ դրամ (մոտ 92 ԱՄՆ դոլար).
- հաշմանդամություն ունեցող երեխա՝ 39 հազար ՀՀ դրամ (մոտ 100 ԱՄՆ դոլար):

Այս նպաստները զգալիորեն ցածր են 67,875 ՀՀ դրամ (մոտ 174 ԱՄՆ դոլար) նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից, որը ներառում է նվազագույն պարենային զամբյուղի արժեքը և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արժեքը: Ու թեև հաշմանդամության համար նախատեսված ամենացածր նպաստը ծածկում է նվազագույն պարենային զամբյուղի արժեքը (36,875 ՀՀ դրամ կամ մոտ 95 ԱՄՆ դոլար)¹⁸, այս հաշվարկը հաշվի չի առնում հաշմանդամության հետ կապված լրացուցիչ ֆինանսական բեռը, որը վերաբերում է առողջության պահպանման, աջակցող սարքերի ձեռքբերման, շարժունակության աջակցության և մատչելիության հետ կապված ծախսերին¹⁹:

Ավելին, հաշմանդամություն ունեցող անձինք կենսաթոշակային տարիքին հասնելուց հետո ստիպված են ընտրություն կատարել ծերության կենսաթոշակ կամ հաշմանդամության կենսաթոշակ ստանալու միջև²⁰: Սա անհատներին ստիպում է հրաժարվել ֆինանսական աջակցության մեկ կարևոր աղբյուրից, ինչը հաճախ նրանց ավելի վատ տնտեսական վիճակում է դնում ծերության տարիներին:

Բացի այդ, պետական խնամքի հաստատություններում բնակվող հաշմանդամություն ունեցող անձինք զրկված են հաշմանդամության կամ ծերության թոշակ ստանալու հնարավորությունից՝ բացառությամբ իրենց նախկին աշխատանքային փորձի հիման վրա հաշվարկվող մի փոքր լրացուցիչ գումարից: Այս քաղաքականությունն էլ ավելի է նվազեցնում ֆինանսական անկախությունը և հաստատություններում գտնվող անձանց դնում պետության կողմից տրամադրվող ռեսուրսներից լիակատար կախվածության մեջ²¹:

Զնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարությունը գիտակցում և ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացած տնտեսական մարտահրավերները, այնուամենայնիվ աղքատության վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության պաշտոնական հրապարակում չի եղել:

Ու թեև ՅՈՒՆԻՍԵԳ-ի աջակցությամբ անցկացվել է հաշմանդամության հետ կապված լրացուցիչ ծախսերի վերաբերյալ ուսումնասիրություն, այն ներկայացվել է միայն շահագրգիռ

¹⁸ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին. նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը», ՀՀ վիճակագրական կոմիտե (Արմստատ), Երևան, 2025 թ. փետրվարի 5 (հայերեն), https://armstat.am/file/article/sv_12_24a_6200.pdf:

¹⁹ Daniel Mont, Alex Cote, Jill Hanass-Hancock, Lena Morgon Banks, Vlad Grigorus, Ludovico Carraro, Zachary Morris, and Monica Pinilla-Roncancio, *Estimating the Extra Costs for Disability for Social Protection Programs*, International Labour Organization, 2022, <https://www.social-protection.org/gimi/ShowResource.action?id=57850>:

²⁰ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2013 թ. դեկտեմբերի 12-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199737>:

²¹ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք, 2013 թ., ՀՀ Ազգային ժողով:

կողմերի մի խմբի և հրապարակայնորեն հասանելի չի դարձել²²: Հաշմանդամության հետ կապված ծախսերի վերաբերյալ թափանցիկ տվյալների և պաշտոնական հաշվետվությունների բացակայությունը սահմանափակում է քաղաքականություն մշակողների, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ հոգուտ ֆինանսական աջակցության բարելավման հանդես գալու կարողությունը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Աղքատության կրճատման և սոցիալական պաշտպանության համակարգերը բարեփոխելու ուղղությամբ Հայաստանի ջանքերը ծավալների առումով շարունակում են սահմանափակ լինել, երբ խոսքը վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Գործող քաղաքականությունը կենտրոնացնում է միայն եկամտի վրա, կիրառում է կախվածությունը սահմանափակող և հնացած սահմանումներ և չի արտացոլում աղքատության բազմաչափ և միջոլորտային իրականությունը, որի հետ գործ ունեն հաշմանդամություն ունեցող անձինք: Արդյունքում, բազմաթիվ անհատներ շարունակում են դուրս մնալ համարժեք ֆինանսական աջակցության և սոցիալական ներառման միջոցառումների շրջանակից:

Ավելի ներառական և իրավունքահենք մոտեցման ուղղությամբ առաջ շարժվելու համար առաջարկվում են հետևյալ առաջարկությունները.

ՀՀ կառավարությանը (աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայարարման ներքո)

Մակարդակ. օրենսդրություն, հանրային քաղաքականություն, ինստիտուտներ

- Ներդնել հաշմանդամության նպաստների ավտոմատ տարեկան ինդեքսավորման համակարգ՝ գնաճը հաշվի առնող ճշգրտում կատարելու և ժամանակի ընթացքում աջակցության իրական արժեքի նվազում թույլ չտալու համար:
- Վերահաշվարկել հաշմանդամության նպաստի նվազագույն չափը՝ արտացոլելով իրական կենսապահովման ծախսերը: Հարկ է օգտագործել դրամական և բնաիրային նպաստների համադրություն՝ հաշմանդամության հետ կապված ծախսերի բազմազանությունը հաշվի առնելու և արժանապատիվ նպաստ տրամադրելու համար:
- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ծրագրերում իրավասության և գնահատման չափանիշների թվում ներառել աղքատության ոչ եկամտային չափումներ, ինչպիսիք են առողջապահության, կրթության, աջակցող սարքերի և տրանսպորտի մատչելիությունը: Մա հնարավորություն կտա ավելի անհատականացված և համապարփակ ընկալում ունենալ կարիքների վերաբերյալ:
- Սոցիալական պաշտպանության կամ աղքատության քաղաքականության ցանկացած խոշոր բարեփոխման համար ինստիտուցիոնալացնել հաշմանդամության

²² «Ներկայացվել են հաշմանդամություն ունեցող երեխաների համար կատարված ծախսերի վերաբերյալ տվյալների վերլուծության արդյունքները», ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական լրահոս, 2024 թ. հոկտեմբերի 18 (հայերեն), <https://mlsa.am/news/795>:



ազդեցության ինչպես նախնական, այնպես էլ հետագա գնահատումների անցկացման պրակտիկան: Այս գնահատումները պետք է անցկացվեն հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ համագործակցությամբ և ներառեն ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդներ՝ իրավունքների լիարժեք պահպանումն ապահովելու համար:

- Փոփոխել այն կանոնակարգերը, որոնք բացառում են պետական հաստատություններում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց՝ հաշմանդամության կամ ծերության նպաստները լիարժեք ստանալու հնարավորությունը: Նման քաղաքականությունը պետք է վերանայվի՝ անձնական ֆինանսական ինքնավարությունը պաշտպանելու համար՝ անկախ կենսապայմաններից:
- Չեղարկել հաշմանդամություն ունեցող տարեցների համար ծերության և հաշմանդամության նպաստների միջև ընտրություն կատարելու պահանջը:
- Չեղարկել հաշմանդամություն ունեցող գործազուրկ անձանց պայմանական եկամուտ վերագրելու դրույթը: Այս գործելակերպը պատժում է աշխատաշուկայից համակարգային մեկուսացման ենթարկվող անհատներին՝ նրանց վերագրելով կեղծ եկամուտ, ինչը հանգեցնում է էական աջակցությունից անարդարացի զրկման:
- Հրաժարվել սոցիալական աջակցության իրավունքը որոշելիս հաշմանդամության նպաստները տնային տնտեսության եկամտի հաշվարկներում ներառելու պրակտիկայից: Այս նպաստները նախատեսված են հաշմանդամության հետ կապված ծախսերը հոգալու համար և չպետք է դիտարկվեն որպես ընդհանուր տնօրինվող եկամուտ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարգերի նախարարությունը

Մակարդակ. ծրագրերի իրականացում և հաղորդակցություն

- Ապահովել, որ սոցիալական պաշտպանության և աղքատության կրճատման բոլոր պիլոտային ծրագրերը համապատասխանեն գործող իրավական չափանիշներին, այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքին: Պիլոտային նախաձեռնությունները չպետք է շրջանցեն հավասարության և անխտրականության, մատչելիության և մասնակցության հիմնական սկզբունքները:
- Մշակել և իրականացնել աղքատության և սոցիալական պաշտպանության վերաբերյալ հանրային հաղորդակցության ռազմավարություն, որը գերծ կլինի խարանավորող խոսույթից, կորդեգրի մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում և կշեռտի մեկուսացման կառուցվածքային պատճառները:
- Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին ներգրավել վնասակար կարծրատիպերին մարտահրավեր նետող և ներառական հանրային քննարկումը խթանող տեղեկատվական արշավների, ուսումնական նյութերի և իրազեկման բարձրացման միջոցառումների համատեղ մշակման միջոցառումներում:



**ՀՀ վիճակագրական կոմիտեին (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
հետ համագործակցությամբ)**

Մակարդակ. տվյալներ և մոնիթորինգ

- Ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց ներառմամբ աղքատության մոնիթորինգի ազգային համակարգ՝ ըստ հաշմանդամության տեսակի, սեռի, տարիքի, տարածաշրջանի և սոցիալ-տնտեսական կարգավիճակի հիման վրա ապախոշորացված տվյալների պարբերաբար հավաքման և հրապարակման հնարավորությամբ:
- Տվյալների հավաքման մեթոդները համապատասխանեցնել միջազգային գործիքների հետ, ինչպիսիք են ԵՄ-ի Եկամուտների և կենսապայմանների վիճակագրությունը (EU-SILC) և Հաշմանդամության վերաբերյալ Վաշինգտոնի խմբի հարցերը՝ տվյալների համեմատելիություն և փաստահենք քաղաքականության մշակում ապահովելու համար:

Զբաղվածություն և ներառական աշխատաշուկաներ

ՀԸԳՀ-ի համապատասխան դրույթները

ՀԸԳՀ 84-րդ հոդվածում նշվում է.

«Կողմերը պետք է ամրապնդեն իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը, զբաղվածության քաղաքականությունը, աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը, սոցիալական երկխոսությունը, սոցիալական պաշտպանությունը, սոցիալական ներգրավվածությունը, կանանց և տղամարդկանց հավասարությունը և խտրականության բացառումը խթանելուն՝ դրանով նպաստելով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական համերաշխության ընդլայնմանը, կայուն զարգացմանը և կյանքի որակի բարելավմանը»:

ՀԸԳՀ 85-րդ հոդվածի «b», «c» և «d» ենթակետերում նշվում է.

«Տեղեկությունների և լավագույն գործելակերպի փոխանակման վրա հիմնված համագործակցությունը կարող է ընդգրկել հետևյալ ոլորտներում հասցեագրման ենթակա որոշակի թվով հարցեր՝ (b) զբաղվածության քաղաքականություն՝ ուղղված արժանապատիվ աշխատանքային պայմաններով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր ստեղծելուն՝ այդ թվում՝ ստվերային տնտեսության և ստվերային զբաղվածության մակարդակը նվազեցնելու նպատակով, (c) աշխատաշուկային ուղղված ակտիվ միջոցառումների և զբաղվածության արդյունավետ ծառայությունների խթանում՝ աշխատաշուկաներն արդիականացնելու և աշխատաշուկայի կարիքներին համապատասխանություն ապահովելու համար, (d) առավել ընդգրկված աշխատաշուկաների և սոցիալական ապահովության այնպիսի համակարգերի խթանում, որոնցում ներառված են անապահով անձինք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք և փոքրամասնությունների խմբերը ներկայացնող անձինք»:

Հիմնական բացահայտումներ

Տևական ընդմիջումից հետո ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2083-Լ որոշմամբ ընդունեց Զբաղվածության 2025-2031 թվականների նոր ռազմավարական ծրագիր²³, որը փոխարինելու եկավ զբաղվածության նախորդ՝ 2013-2018 թվականների ռազմավարությանը²⁴: Սա նշանակալի տեղաշարժ է զբաղվածության քաղաքականության պլանավորման գործում՝ հաշվի առնելով այդ ուղղությամբ համապարփակ շրջանակի գրեթե

²³ «Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թ. դեկտեմբերի 27-ի N 2083-Լ որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=201615>:

²⁴ «Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությանը և սոցիալական ներգրավվածության մասին գեկույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 8-ի նիստի արձանագրությունից բաղվածք N 45 (հայերեն) <https://www.irtek.am/views/act.aspx?aid=68183>:



տասնամյա բացակայությունը: Այնուամենայնիվ, չնայած ներառական աշխատաշուկաների մասով Հայաստանի կողմից ՀԸԳՀ-ի, ՄԱԿ-ի կոնվենցիայի և հաշմանդամության վերաբերյալ ազգային օրենսդրության շրջանակներում ստանձնված պարտավորություններին, նոր ռազմավարության մեջ հաշմանդամություն ունեցող անձանց ներառման նշանակալի միջոցառումներ ընդգրկված չեն:

Երկու ռազմավարությունների միջև բառային որոնման համեմատությունը ցույց է տալիս հաշմանդամության վերաբերյալ հիշատակումների շեշտակի անկում: 2013-2018 թվականների ռազմավարությունում հաշմանդամություն ունեցող անձանց մասին արվել է 62 հիշատակում, որոնք զբաղվածության խոչընդոտների, թիրախային քաղաքականության և ներառական աշխատաշուկայի ծրագրերի վրա ավելի հստակ կենտրոնացում են արտահայտում: Ի տարբերություն դրա՝ 2025-2031 թվականների ռազմավարությունում հաշմանդամությունը հիշատակվում է ընդամենը յոթ անգամ և բացառապես իրավիճակի վերլուծության բաժնում՝ առանց հաշմանդամությանը վերաբերող միջոցառումները ռազմավարական նպատակների, առաջնահերթ ծրագրերի կամ ակնկալվող արդյունքների մեջ ներառելու:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը²⁵ հստակորեն արգելում է խտրականությունը աշխատանքի ընդունման և աշխատանքային հարաբերությունների իրացման գործելակերպերում: Աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածն արգելում է, ի թիվս այլ գործոնների, հաշմանդամության հիման վրա ուղղակի և անուղղակի խտրականությունը՝ երաշխավորելով, որ անձինք աշխատանքային հարաբերություններում չեն կարող արժանանալ պակաս բարենպաստ վերաբերմունքի: Օրենքը նաև արգելում է աշխատանքի ընդունման հայտարարություններում և աշխատանքային հարաբերություններում, գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի, խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը:

Չնայած իրավական ուժեղ հիմքերին՝ խնդիրը կայանում է իրավակիրառ արդյունավետության բացակայության մեջ: Առկա է աշխատանքային վայրում խտրականության վերահսկման կամ ազդարարման համակարգված մեխանիզմի բացակայություն²⁶, իսկ հաշմանդամության հիմքով աշխատանքի խտրականության ոչ մի դեպք արդյունավետորեն չի հետապնդվել օրենքով: Գործատուները հաճախ չեն ապահովում անհրաժեշտ հարմարեցումներ աշխատավայրում, իսկ հաշմանդամություն ունեցող անձինք զգալի դժվարությունների են բխվում խտրականությունն ապացուցելու հարցում՝ պաշտոնական բողոքարկման մեխանիզմների և իրավական աջակցության բացակայության պատճառով:

²⁵ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 2004 թ. նոյեմբերի 9-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199957>:

²⁶ «Աշխատանքային իրավունքների պաշտպանության բարելավման քաղաքականության փաստաթուղթ. քաղաքացիական հասարակության կազմակերպությունների առաջարկներ», պատրաստվել է «Արժանապատիվ աշխատանք հիմա՝» ծրագրի շրջանակում, Երևան, 2023, (հայերեն) <https://socioscope.am/wp-content/uploads/2023/02/Քաղաքականության-փաստաթուղթ-Աշխատանքային-իրավունքներ.pdf>:



Թեև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով²⁷ նախատեսված է պետական հաստատությունների համար հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունման 3% և 100-ից ավելի աշխատակից ունեցող մասնավոր ընկերությունների համար՝ 1% քվոտա, սակայն կառավարությունն այդ քվոտաների գործնական կիրարկման համար անհրաժեշտ որոշում չի ընդունել՝ փաստացի դարձնելով անարդյունավետ: Իրավակիրարկման բացակայությունը նշանակում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունման հարցում գործատուների համար պարտադիր պահանջներ գոյություն չունեն, ինչպես և գոյություն չունեն ո՛չ խրախուսական մեխանիզմներ, ո՛չ էլ պատժամիջոցներ՝ օրենքի կատարումն ապահովելու համար²⁸:

Բացի այդ, օրենսդրորեն ամրագրված է աշխատավայրում խելամիտ հարմարեցումների պահանջը²⁹, սակայն պետական մարմինները այն պատշաճ կերպով չեն ապահովում: Հաշմանդամություն ունեցող աշխատողների և ուսանողների համար «խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022 թ. օգոստոսի 11-ի որոշման³⁰ մեջ սահմանվում են աշխատավայրում հարմարեցումներ ապահովելու դրույթները, սակայն չի սահմանվում «խելամտությունը»՝ համաձայն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի³¹: Դրա փոխարեն, այն «անհարկի բեռ» հասկացությունը սահմանում է որպես տվյալ աշխատավայրի կամ ուսումնական հաստատության ընդհանուր ծախսերի 5%-ը գերազանցող ծախս, և ինչը որոշ դեպքերում կարող է անիրատեսորեն բարձր լինել ու «վախեցնել» գործատուներին ապահովել հարմարեցումներ:

Ավելին, չկա հստակ կառուցվածքային մեխանիզմ՝ գործատուների՝ խելամիտ հարմարեցումներ ապահովելու պարտավորությունը վերահսկելու, ինչպես նաև պետական որևէ ֆինանսական աջակցություն՝ աշխատանքային հարմարեցումները ավելի մատչելի դարձնելու համար: ՀՀ կառավարության՝ գործատուներին հարմարեցումների ծախսերը փոխհատուցելու նպատակով նախատեսված 2023 թվականի պետական ծրագիրն իր գործողության առաջին վեց ամիսների ընթացքում ոչ մի դիմող չի ունեցել³²:

²⁷ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2013 թվականին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից:

²⁸ «Քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանման կատարման և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1308-Ն որոշում (հայերեն) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=102803>:

²⁹ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2021 թվականին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից:

³⁰ «Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022 թ. օգոստոսի 11-ի N 1265-Ն որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167278>:

³¹ «Ընդհանուր բնույթի մեկնաբանություն N 6՝ Հավասարություն և ապախտրականություն», ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե, CRPD/C/GC/6, 2018 թ. ապրիլի 26, <https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-comment-no6-equality-and-non-discrimination>:

³² «Զբաղվածության խթանման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 23-ի N 242-Ն որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174467>:

ՀԸԳՀ-ի 85-րդ հոդվածի (d) ենթակետը նախատեսում է ներառական աշխատաշուկաների և սոցիալական ապահովության այնպիսի համակարգերի խթանում, որոնցում ներառված են խոցելի խմբերը ներկայացնող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք: Այնուամենայնիվ, Հայաստանի զբաղվածության քաղաքականությունները համահունչ չեն այս պարտավորությանը, քանի որ դրանք չեն ապահովում կառուցվածքային ծրագրեր կամ խթաններ հաշմանդամություն ունեցող անձանց ներառական աշխատանքի համար:

Հայաստանում դեռևս գոյություն չունի հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության մակարդակի մոնիթորինգի պաշտոնական, համապարփակ համակարգ: Այնուամենայնիվ, 2022 թվականի վերջին տվյալները ցույց են տալիս, որ 15-74 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց 68.2%-ը դուրս է աշխատանքային շուկայից, մինչդեռ հաշմանդամություն չունեցող անձանց շրջանում այդ ցուցանիշը կազմում է 38.9%: Չնայած զբաղվածության ոլորտում որոշակի դրական տեղաշարժերին՝ հաշմանդամություն ունեցող անձանց միայն 26.8%-ն էր աշխատում, իսկ աշխատուժում գտնվողների 15.9%-ը գործազուրկ էր: Տարածաշրջանային տարբերությունները պահպանվում են. գյուղական վայրերում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային շուկայում մասնակցության ցուցանիշը մի փոքր ավելի բարձր է (39.6%), քան քաղաքային բնակավայրերում (27.9%)³³:

Հայաստանի պետական զբաղվածության ծրագրերը հիմնականում չեն կարողացել արդյունավետ աջակցություն ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար: 2020-ից մինչև 2023 թվականի կեսերը պետական զբաղվածության ծրագրերի միջոցով աշխատանքի է ընդունվել ընդհանուր առմամբ 3,096 անձ, սակայն նրանցից միայն 222-ն էին հաշմանդամություն ունեցող անձինք, ինչը կազմում է ծրագրի բոլոր շահառուների ընդամենը 7%-ը³⁴: Անորոշ է մնում՝ արդյոք այդ զբաղվածության հնարավորությունները եղել են երկարաժամկետ աշխատանքային պայմանագրեր, թե ժամանակավոր պայմանավորվածություններ, ինչը մտահոգություններ է առաջացնում ծրագրերի կայունության և ներառականության վերաբերյալ:

2021-2022 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությունը դադարեցրեց բոլոր պետական զբաղվածության ծրագրերը՝ դրանց արդյունավետությունը գնահատելու նպատակով³⁵: Այս քայլը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով պետության ստանձնած պարտավորությունների խախտում էր և բացասական իմաստով զգալիորեն ազդեց հաշմանդամություն ունեցող անձանց վրա, որոնք մնացին առանց աշխատաշուկայի ակտիվ աջակցության միջոցառումների:

³³ «Աշխատուժի հետազոտություն. հաշմանդամություն ունեցող բնակչություն», ՀՀ վիճակագրական կոմիտե, Երևան, 2023 թ., (հայերեն), https://armstat.am/file/article/lab_market_2023_10.pdf:

³⁴ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2023 թ. հուլիսի 21-ի պաշտոնական արձագանքը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ին:

³⁵ «Զբաղվածության աջակցության մի քանի ծրագրեր այլևս չեն գործում», «Ժողովուրդ» օրաթերթ, հաստատված է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ի կողմից, (հայերեն), <https://armlur.am/1221256>:

2021 թվականին կառավարությունը գործարկեց հարկային արտոնությունների ծրագիր³⁶ ուղղված ռազմական գործողությունների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց աշխատանքի ընդունող գործատուներին: Ծրագիրը նախատեսում էր եկամտահարկի նվազեցում մինչև 100,000 դրամ՝ մեկ եռամսյակի համար, ինչպես նաև մինչև 500,000 դրամ միանվագ աջակցություն՝ աշխատանքային միջավայրի հարմարեցման նպատակով: Այդուհանդերձ, ծրագրին մասնակցեց միայն մեկ գործատու, ինչը ցույց տվեց ծրագրի անկարողությունը իրական զբաղվածության հնարավորություններ ստեղծելու հարցում: Նմանապես, 2023 թվականին գործարկված խելամիտ հարմարեցումների փոխհատուցման ծրագիրն իր առաջին վեց ամիսների ընթացքում դիմողներ չունեցավ, ինչն առաջացնում է մտահոգություններ դրա նախագծման, մատչելիության և արդյունավետության վերաբերյալ³⁷:

Զբաղվածության աջակցության նշված ծրագրերի սահմանափակ արդյունավետությանը նպաստող հիմնական գործոններից մեկը դրանց սահմանափակող համապատասխանության չափանիշներն են եղել: Գործատուները պարտավոր էին թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները հրապարակել Միասնական սոցիալական ծառայության (ՄՄԾ) հարթակի³⁸ միջոցով, իսկ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է գրանցված լինեին համակարգում՝ ծրագրից օգտվելու համար: Այս ձևաչափը բացառում էր այն գործատուներին, որոնք աշխատակիցներ էին ընդունում անկախ ուղիներով, և նվազեցնում էր պետական նախաձեռնություններին մասնավոր հատվածի մասնակցության խթանները: Այս ձևաչափը բացառել է այն գործատուներին, որոնք աշխատակիցներ էին ընդունում անկախ ալիքներով, և նվազեցրել մասնավոր ընկերությունների կողմից պետական նախաձեռնություններին մասնակցելու խթանները: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն արդեն իսկ ընդունել է ծրագրի թերությունները, ինչն արտահայտվել է այն չարունակելու կամ չվերագործարկելու որոշման ընդունմամբ³⁹:

Հայաստանում զբաղվածության աջակցության ծրագրերը լիովին մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Աշխատանքի որոնման հարթակների^{40 41} գործարկումը նպատակ ուներ խթանել աշխատանքի շուկայի ինտեգրումը, սակայն հարթակները չեն համապատասխանում Վեր բովանդակության մատչելիության ուղեցույցին (WCAG)⁴²: Բացի այդ, աշխատանքային ընթացակարգերն ավարտին հասցնելու համար

³⁶ «Ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 1-ի N 460-L որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151281>:

³⁷ ՀՀ կառավարության 2023 թ. N 242-L որոշում:

³⁸ ՀՀ ԱՍՀՆ միասնական սոցիալական ծառայության պաշտոնական վեբկայք, <https://socservice.am>:

³⁹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական արձագանք, 2023 թ.:

⁴⁰ e-work.am զբաղվածության պետական հարթակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, գործարկվել է 2024 թ. մայիսի 3-ին, <https://e-work.am>:

⁴¹ «Աշխատանք առանց սահմանների» զբաղվածության պետական հարթակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, <https://rbg.workforall.am>:

⁴² Վեր բովանդակության մատչելիության ուղեցույց (WCAG 2.1), W3C կոնսորցիումի հանձնարարական, 2018 թ. հունիսի 5, <https://www.w3.org/TR/WCAG21/>:

անհրաժեշտ է անձամբ այցելել Միասնական սոցիալական ծառայության կենտրոններ, ինչը
էական խոչընդոտներ է ստեղծում հաշմանդամություն ունեցող աշխատանք փնտրողների
համար:

Բացի այդ, չկա հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված համակարգված
մասնագիտական վերապատրաստման կամ մենթորության ծրագիր: Չնայած առկա են
ընդհանուր զբաղվածության վերապատրաստման ծրագրեր, սակայն դրանք չեն ներառում
մատչելիության հարմարեցումներ, աջակցող տեխնոլոգիաներ կամ աշխատանքի
տեղավորման ծառայություններ, որոնք համապատասխանեցված կլինեին հաշմանդամություն
ունեցող անձանց կարիքներին:

Չնայած ՀԸԳՀ-ի կողմից զբաղվածության և սոցիալական քաղաքականություններում
քաղաքացիական հասարակության ներգրավվածության վրա շեշտադրմանը, չկա որևէ
ապացույց, որ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները ներգրավված են
եղել Զբաղվածության 2025–2031 թվականների ռազմավարական ծրագրի⁴³ մշակման
գործընթացում: Նրանք նաև համակարգված կերպով չեն ընդգրկվել աշխատանքային
քաղաքականությունների քննարկումների մեջ:

Եզրակացություններ և առաջարկություններ

Չնայած Զբաղվածության 2025–2031 թվականների ռազմավարական ծրագրի միջոցով
Հայաստանում զբաղվածության քաղաքականությունը թարմացնելու նորացված ջանքերին՝
զբաղվածության համակարգերը ՀԸԳՀ-ի 85-րդ հոդվածի (d) ենթակետի և Հաշմանդամություն
ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 27-րդ հոդվածի պահանջներին
համապատասխանեցնելու գործում շարունակում են առկա լինել լուրջ բացեր:
Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը ռազմավարական
առաջնահերթություններում չընդգրկվել, արդյունավետ կիրարկման մեխանիզմների
բացակայությունը և աջակցության ծրագրերի թերի մշակումը շարունակում են բացասաբար
անդրադառնալ աշխատաշուկայում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության
վրա:

Ավելի ներառական և իրավունքահենք զբաղվածության քաղաքականության շրջանակ
ապահովելու համար ներկայացվում են հետևյալ առաջարկությունները.

ՀՀ կառավարությանը (աշխատանքի և սոցիալական հարգերի նախարարության ղեկավարման ներքո)

Մակարդակ. օրենսդրություն, հանրային քաղաքականություն, ինստիտուտներ

- Վերանայել Զբաղվածության 2025–2031 թվականների ռազմավարական ծրագիրը՝
ներառելով հաշմանդամությանն առնչվող հատուկ նպատակներ, չափելի ցուցանիշներ և

⁴³ «Զբաղվածության 2025–2031 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ
կառավարության 2024 թ. դեկտեմբերի 27-ի N 2083-L որոշում (հայերեն)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=201615>:



իրագործման հստակ չափորոշիչներ: Ռազմավարությունը պետք է հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող փախստականներին, հստակորեն ճանաչի որպես աշխատաշուկայի՝ չօգտագործված ներուժով ակտիվ մասնակիցներ, այլ ոչ թե որպես պասիվ աջակցություն ստացողներ:

- Պարբերաբար անցկացնել զբաղվածության ռազմավարության վրա հաշմանդամության ազդեցության վերանայումներ, որոնք կներառեն քաղաքականությունը ճշգրտող մեխանիզմներ և կառուցված կլինեն քաղված դասերի ու աշխատաշուկայի փոփոխվող պայմանների շուրջ: Այս վերանայումները պետք է իրականացվեն մասնակցային եղանակով և հիմնվեն ապահոշորացված տվյալների վրա:
- Գործնականացնել «Զբաղվածության մասին» օրենքով նախատեսված զբաղվածության քվոտաների համակարգը՝ ընդունելով կառավարության հատուկ որոշում: Վերջինս պետք է ներառի կիրարկման մեխանիզմներ, կանոնավոր մոնիթորինգ և նշանակալի պատժամիջոցներ՝ չկատարման դեպքերում:
- Մշակել գործատուների խթանման համակարգեր՝ ներառյալ հարկային արտոնություններ, աշխատավարձերի սուբսիդիաներ և հանրային ճանաչման ծրագրեր՝ այն ընկերությունների համար, որոնք ապահովում կամ գերազանցում են օրենքով սահմանված քվոտան: Այս մեխանիզմները պետք է առաջնահերթություն տան աշխատանքի ընդունման և պահպանման ներառական գործելակերպերին:
- Փոփոխել խելամիտ հարմարեցումների մասին 2022 թվականի որոշումը՝ հանելով 5% ֆինանսական սահմանաչափը և այն փոխարինելով ՄԱԿ-ի կոնվենցիայի սկզբունքներին համապատասխանող ճկուն, դեպքից կախված չափանիշով: Փոփոխությունը պետք է արտացոլի «անհարկի բեռ» հասկացությունն այնպես, ինչպես որ այն մեկնաբանում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն:
- Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ համատեղ մշակել հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված ներառական մասնագիտական վերապատրաստման ծրագրեր, որոնք կներառեն աջակցող տեխնոլոգիաներ, մատչելի նյութեր և հարմարվողական ուսուցման ձևաչափեր:
- Վերագործարկել 2023 թվականի հարմարեցումների փոխհատուցման ծրագիրը՝ վերանայված իրավասության չափանիշներով, պարզեցված դիմումի ընթացակարգով և լիարժեք մատչելիությամբ՝ ինչպես գործատուների, այնպես էլ հաշմանդամություն ունեցող աշխատակիցների համար:
- Վերացնել սահմանափակումը, ըստ որի՝ աջակցության ծրագրերից կարող են օգտվել միայն Միասնական սոցիալական ծառայության հարթակով աշխատանքի դիմած անձինք: Ներառել նաև այն գործատուներին, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի են ընդունում այլ ուղիներով՝ ընդլայնելով ներառական աշխատանքի ընդունման հնարավորությունները:
- ՓՄՁ-ներին տրամադրել պետական ֆինանսավորում և տեխնիկական աջակցություն՝ աշխատավայրում հարմարություններ ապահովելու նպատակով: Գործընթացները պետք է պարզեցվեն և ուղեկցվեն իրազեկման արշավներով՝ դրանց կիրառման ազդեցությունը մեծացնելու համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարգերի նախարարությանը

Մակարդակ. ծրագրերի, հանրային քաղաքականության և ծառայությունների մշակում

- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող ներառյալ խոցելի խմբերը ներկայացնող, ինչպես օրինակ փախստականների կազմակերպությունների իմաստալից ներգրավվածությունը զբաղվածության հետ կապված քաղաքականությունների և ծրագրերի մշակման, իրականացման և մոնիթորինգի գործում: Նրանց մասնակցությունը պետք է լինի համակարգված, շարունակական և մատչելի:
- Ապահովել հեռավար հասանելիություն Միասնական սոցիալական ծառայության միջոցով տրամադրվող զբաղվածությանն առնչվող բոլոր ծառայությունների նկատմամբ՝ վերացնելով գրանցման, հարցազրույցի կամ փաստաթղթերի ներկայացման նպատակով անձնական այցելության անհրաժեշտությունը:
- Չբաղվածության ծրագրերի պլանավորման փուլում կիրառել համընդհանուր դիզայնի սկզբունքներ և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ արդյունավետ խորհրդակցություններ ծրագրերի մշակման, իրագործման և վերանայման բոլոր փուլերում:
- Մշակել կառուցվածքային մենթորության և հավասարը հավասարին աջակցության վրա հիմնված աշխատանքի քուլչինգի ծրագրեր՝ հիմք ընդունելով ԵՄ անդամ պետություններում հաջողված փորձը, որը դրական է գնահատվել նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի կողմից:

Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

Մակարդակ. մոնիթորինգ և փոխհատուցում

- Ստեղծել հատուկ վերահսկող մեխանիզմ՝ աշխատավայրում խտրականության դեպքերի և խեղամիտ հարմարեցման պարտավորությունների խախտումների մոնիթորինգի համար:
- Մշակել անանուն և մատչելի բողոքարկման մեխանիզմ՝ աշխատավայրում խտրականության բախվող հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարգերի նախարարությանն ու Վիճակագրական կոմիտեին (Պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցությամբ)

Մակարդակ. տվյալների համակարգեր և մոնիթորինգ

- Ստեղծել զբաղվածության տվյալների կենտրոնացված համակարգ՝ մշակված Վիճակագրական կոմիտեի, Պետական եկամուտների կոմիտեի և Աշխատանքի և սոցիալական հարգերի նախարարության համագործակցությամբ՝ ըստ հաշմանդամության տեսակի, սեռի, տարիքի, տարածաշրջանի և զբաղվածության ոլորտի ապախոշորացված տվյալներ հավաքելու և հրապարակելու նպատակով:



Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

Մակարդակ. թվային համակարգերի մատչելիություն և ներառում

- Ապահովել, որ աշխատանք գտնելու և առաջարկելու հարթակները, ներառյալ՝ «Աշխատանք առանց սահմանների» հարթակը, համապատասխանեն Վեր բովանդակության մատչելիության ուղեցույցի (WCAG 2.1) պահանջներին և լիարժեքորեն օգտագործելի լինեն տարատեսակ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Սոցիալական երկխոսություն և սոցիալական գործընկերների մասնակցության ընդլայնում

ՀԸԳՀ-ի համապատասխան դրույթները

ՀԸԳՀ 85-րդ հոդվածի «ց» ենթակետում նշվում է.

«Տեղեկությունների և լավագույն գործելակերպի փոխանակման վրա հիմնված համագործակցությունը կարող է ընդգրկել հետևյալ ոլորտներում հասցեագրման ենթակա որոշակի թվով հարցեր՝ (ց) սոցիալական գործընկերների մասնակցության ընդլայնում և սոցիալական երկխոսության խթանում, այդ թվում՝ համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի հնարավորություններն ամրապնդելու միջոցով»:

ՀԸԳՀ 86-րդ հոդվածում նշվում է.

«Կողմերը պետք է խրախուսեն համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավորապես՝ սոցիալական գործընկերների ներգրավումը Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության մշակման և բարելավումների գործընթացին և Կողմերի միջև սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությանը»:

ՀԸԳՀ 87-րդ հոդվածում նշվում է.

«Կողմերը պետք է ձգտեն ընդլայնել զբաղվածության և սոցիալական քաղաքականության հարցերի վերաբերյալ համագործակցությունը՝ տարածաշրջանային, բազմակողմ և միջազգային համապատասխան բոլոր ֆորումներում և կազմակերպություններում»:

ՀԸԳՀ 89-րդ հոդվածում նշվում է.

«Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպվի կանոնավոր երկխոսություն»:

Հիմնական բացահայտումներ

Վերջերս Հայաստանը քայլեր է ձեռնարկել քաղաքացիական հասարակության ներգրավվածության ինստիտուցիոնալացման ուղղությամբ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի կազմում ստեղծելով Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը⁴⁴: ՀՀ

⁴⁴ CSO Meter, “Armenia: Government Establishes New Department to Boost Public Participation and Principles of Open Government,” January 29, 2025, <https://csometer.info/updates/armenia-government-establishes-new-department-boost-public-participation-and-principles>:

վարչապետի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ⁴⁵ ստեղծված վարչությունը պատասխանատու է մասնակցային կառավարման մեխանիզմների մշակման, հանրային ներգրավվածության գործընթացների մոնիթորինգի, բաց կառավարման ծրագրերի իրականացման և ԲՀԿ-ներին առնչվող հարցերի կարգավորման համար: Վարչությունը հիմնադրվել է Հանրային կառավարման 2023-2025 թվականների բարեփոխումների ռազմավարության⁴⁶ շրջանակներում, որը մասնակցային կառավարումը դիտարկում է որպես բարեփոխումների առանցքային բաղադրիչ: Այդուհանդերձ, չնայած բաց կառավարման և պետություն - քաղաքացիական հասարակություն համագործակցության խորացմանն ուղղված հանձնառություններին, վարչության ստեղծման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ խորհրդակցություններ չեն անցկացվել:

Թեև ՀՀ օրենսդրական շրջանակը պարտադրում է անցկացնել օրենսդրության և քաղաքականության բարեփոխումների շուրջ հանրային խորհրդակցություններ⁴⁷, այդուհանդերձ լիարժեք մասնակցության համար խոչընդոտներ դեռևս առկա են: Կառավարությունը որպես իր հիմնական խորհրդատվական գործիք հիմնականում ապավինում է e-draft.am-ին⁴⁸՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման առցանց հարթակին: Այնուամենայնիվ, խորհրդակցությունների կարճ ժամանակահատվածները, իրավաբանական բարդ լեզուն և մատչելիության հնարավորությունների բացակայությունը շատ կազմակերպությունների թույլ չեն տալիս արդյունավետորեն ներգրավվել քաղաքականության շուրջ քննարկումներում: Բազմաթիվ իրավական ակտերի նախագծեր չեն հրապարակվում մատչելի ձևաչափերով, և կազմակերպությունները լրացուցիչ դժվարությունների են հանդիպում բյուրոկրատական ընթացակարգերում կողմնորոշվելիս, ինչը խոչընդոտում է իրենց ներգրավվածությունը այն օրենսդրական բարեփոխումներում, որոնք ուղղակիորեն առնչվում են իրենց իրավունքներին⁴⁹:

Հայաստանը պաշտոնապես ստեղծել է հաշմանդամության ոլորտում գործող կազմակերպությունների հետ խորհրդակցությունների մեխանիզմներ, սակայն այդ

⁴⁵ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-L որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի 2024 թ. դեկտեմբերի 26-ի N 1204-L որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=201524>:

⁴⁶ «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքների շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թ. մայիսի 13-ի N 691-L որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>:

⁴⁷ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Գլուխ 2, ընդունվել է 2018 թ. մարտի 21-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=187324>:

⁴⁸ ՀՀ արդարադատության նախարարության Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/>:

⁴⁹ «Հանրային կայքում խորհրդակցությունների համար որոշման նախագծի հրապարակումը՝ առանց որևէ մատչելիության ապահովման միջոցների և նախապատրաստման ողջ գործընթացում ներգրավվածության հնարավորությունների, չի համապատասխանում պետության՝ ՀՈՒԱԿ-ով ստանձնած պարտավորություններին»: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողների և աշխատանքային խմբի 2022 թ. դեկտեմբերի 22-ի համատեղ հաղորդագրություն OL ARM 1/2022.

մեխանիզմները գործնականում մեծ մասամբ անարդյունավետ են: ՀՀ վարչապետի 2008 թ. փետրվարի 25-ի N 98 որոշմամբ⁵⁰ ստեղծված Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը նախատեսված էր ապահովելու պետական հաստատությունների և ՀԿ-ների հավասար ներկայացվածությունը՝ հաշմանդամության հետ կապված հարցերը քննարկելու և խորհրդատվական բնույթի առաջարկություններ ընդունելու համար: Այնուամենայնիվ, հանձնաժողովը կանոնավոր կերպով նիստեր չի գումարում, ինչպես պահանջում է իր մանդատը, և որպես բովանդակալից մասնակցության հարթակ մնում է թերօգտագործված:

Չնայած իր պաշտոնական դերին՝ հանձնաժողովը երբեք չի զբաղվել ՀԸԳՀ-ին առնչվող քննարկումներով կամ սոցիալական քաղաքականության բարեփոխումներով՝ կապված տնտեսական ներառման և զբաղվածության ռազմավարությունների հետ: Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների համար որևէ հարթակ չի ստեղծվել, որպեսզի դրանք կարողանան մասնակցել ՀԸԳՀ կիրարկման վերաբերյալ քննարկումներին: Վերջիններս չեն ստանում նաև ՀԸԳՀ-ին առնչվող բարեփոխումների վերաբերյալ քաղաքացիական հասարակության ավելի լայն խորհրդակցություններին մասնակցելու հրավեր:

Նույնիսկ այն դեպքերում, երբ հաշմանդամության ոլորտին առնչվող խորհրդակցություններ են անցկացվում այլ բարեփոխումների օրակարգերի շրջանակներում, դրանք հիմնականում մնում են ոչ մատչելի և ոչ արդյունավետ: Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները հայտնում են, որ իրենք հաճախ դուրս են մնում որոշումների կայացման գործընթացներից, իսկ մասնակցության դեպքերում նրանց առաջարկությունները հազվադեպ են արտացոլվում վերջնական քաղաքականության փաստաթղթերում: Որոշ դեպքերում որոշումների նախագծերը հայտնվում են կառավարության օրակարգում⁵¹ առանց նախնական հանրային քննարկման, ինչն արգելափակում է հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների՝ բովանդակային ներդրում ունենալու կարողությունը: Օրինակ՝ անձնական օգնականի ծառայությունների վերաբերյալ 2022 թվականի որոշումները ձևականորեն քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց հետ, սակայն բազմաթիվ առաջարկություններ անտեսվել են, ընդունված որոշումներն էլ չեն համապատասխանել եվրոպական լավագույն փորձին⁵²:

Հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի դուրս մղումն ավելի է սահմանափակում սոցիալական երկխոսության ներկայացուցչականությունը Հայաստանում: Հաշմանդամություն ունեցող փախստականներն ու երեխաները և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ դուրս են մնում քաղաքականության մշակման գործընթացներից, և նրանց հատուկ կարիքները բավարար չափով չեն արտացոլվում

⁵⁰ «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2008 թ. փետրվարի 25-ի N 98 որոշում (հայերեն) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=197606>:

⁵¹ ՀՀ կառավարության նիստի օրակարգ, Էլ. կառավարման հարթակ, <https://e-gov.am/sessions/>:

⁵² «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, քննարկման ամփոփաթեթ (հայերեն), <https://www.e-draft.am/projects/4043/digest?page=1>:

օրենսդրական բարեփոխումներում⁵³: Հանրային քննարկումները, եթե դրանք առհասարակ տեղի են ունենում, հաճախ անցկացվում են անմատչելի վայրերում, առանց ժեստերի լեզվով թարգմանության և առանց մատչելի ձևաչափով նյութերի տրամադրման, ինչը խոչընդոտում է հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ մասնակցությունը⁵⁴:

Հաշմանդամության հարցերով մասնագիտացված ֆորումներից զատ, Հայաստանում սոցիալական երկխոսության ավելի լայն մեխանիզմները մնում են թույլ զարգացած՝ աշխատաշուկայի քաղաքականության մշակման գործում արհմիությունների, գործատուների կազմակերպությունների և անկախ ԹՀ-ների սահմանափակ ներգրավվածությամբ: Չնայած Հանրապետական եռակողմ հանձնաժողովի⁵⁵ նման պաշտոնական կառույցի գոյությանը, որը ներառում է կառավարության, գործատուների և արհմիությունների ներկայացուցիչներին, ներառական զբաղվածության քաղաքականության որոշումների վրա դրա ազդեցությունը մնում է չնչին:

Սույն հետազոտությանը մասնակցություն ունեցած հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները տեղյակ չեն այս ավելի լայն սոցիալական երկխոսության շրջանակներում քննարկումների մասին կամ չեն մասնակցում դրանց: Չնայած աշխատաշուկայում հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացած զգալի խոչընդոտներին՝ ո՛չ կառավարությունը, ո՛չ գործատուների ասոցիացիաները, ո՛չ էլ արհմիությունները համակարգված խորհրդակցություններ չեն անցկացնում հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ:

Չի հաջողվել գտնել որևէ տեղեկություն, որը կվերաբերեր քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների կարողությունների զարգացման ծրագրերին, որոնք համակարգված կերպով կուժեղացնեին նրանց կարողությունները ՀԸԳՀ-ի կիրարկման մոնիթորինգի կամ քաղաքական գործընթացներում մասնակցության ուղղությամբ: Թեև միջազգային աջակցությամբ իրականացվել են ԵՄ մեխանիզմների, շահերի պաշտպանման ռազմավարությունների և ՀԸԳՀ-ի մոնիթորինգի վերաբերյալ վերապատրաստումներ, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները նշում են, որ իրենք հաճախ դուրս են մնացել այդ ծրագրերից և չեն ստացել համապատասխան շարունակական աջակցություն: Ավելին, գոյություն չունի պետության կողմից որևէ նախաձեռնություն՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին ֆինանսական կամ կառուցվածքային աջակցություն ցուցաբերելուն՝ դրանց մասնագիտական կամ կազմակերպչական կարողությունները զարգացնելու նպատակով, ինչի հետևանքով

⁵³ «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ այլընտրանքային զեկույց. Հայաստանի Հանրապետություն, 2025 թ.», Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա:

⁵⁴ «Հայաստանում ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ ստվերային զեկույց», Ներկայացված է 2025 թ. հունվարի 20-ին՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ԶԿ-ի կողմից:

⁵⁵ Հանրապետական Նոր կոլեկտիվ պայմանագիր, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա, 2024 թ. դեկտեմբերի 13, <https://hamk.am/knqvets-hanrapetakan-nor-kolektiv-paymanagir>:

հաշմանդամություն ունեցող անձանց շատ կազմակերպություններ շարունակում են կախվածության մեջ մնալ միջազգային դոնորներից:

Եզրակացություններ և առաջարկություններ

Չնայած Հայաստանը պաշտոնապես մասնակցային կառավարման պարտավորություններ է ստանձնել, այդ ջանքերը չեն հանգեցրել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների իմաստալից կամ ներառական ներգրավվածության, մասնավորապես՝ ՀԸԳՀ-ի կիրարկման համատեքստում: Գոյություն ունեցող կառույցներն արդյունավետորեն չեն օգտագործվում, իսկ մասնակցության մեխանիզմներն ունեն մատչելիություն, թափանցիկություն և արձագանքման պակաս: Նպատակային կարողությունների զարգացման և կանոնավոր խորհրդակցությունների բացակայության պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները դուրս են մնում թե՛ քաղաքացիական հասարակության ընդհանուր երկխոսությունից, և թե՛ հաշմանդամության համայնքին ուղղակիորեն առնչվող ոլորտային բարեփոխումներից:

ՀԸԳՀ 85-րդ հոդվածի (g) ենթակետի, 86-րդ և 89-րդ հոդվածների, ինչպես նաև ՄԱԿ-ի կոնվենցիայի 4(3) հոդվածի հետ համապատասխանություն ապահովելու համար առաջարկվում է ձեռնարկել հետևյալ գործողությունները.

ՀՀ կառավարությանը (ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգման ներքո)

Մակարդակ. ինստիտուցիոնալ, օրենսդրական և մասնակցային կառավարում

- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների, ներառյալ՝ խոցելի խմբերի (հաշմանդամություն ունեցող փախստականներ ու երեխաներ, հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձինք) լիարժեք մասնակցությունը ՀԸԳՀ-ի հետ կապված բոլոր խորհրդակցություններում: Այս մասնակցությունը պետք է տարածվի ինչպես քաղաքացիական հասարակության ընդհանուր երկխոսությունների, այնպես էլ գրավվածության, սոցիալական պաշտպանության և տնտեսական ներառման վերաբերյալ ոլորտային քննարկումների վրա:
- Ամրապնդել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով ազգային հանձնաժողովի աշխատանքը՝ ապահովելով դրա նիստերի կանոնավոր անցկացումը, կառուցվածքային օրակարգերի շուրջ աշխատանքը և հետևողականության ու հետադարձ կապի մեխանիզմները: Հանձնաժողովի մանդատը պետք է թարմացվի՝ ներառելով ՀԸԳՀ-ին վերաբերող հարցերը և միջոլորտային բարեփոխումները, որոնք անմիջականորեն ազդում են հաշմանդամություն ունեցող անձանց վրա:
- Փոխվարչապետի աշխատակազմի կամ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգման ներքո ստեղծել ՀԸԳՀ-ի ուղղությամբ քաղաքացիական հասարակության հատուկ աշխատանքային խումբ, որի կազմը կներառի հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին, և որը պարբերաբար կհանդիպի՝ ՀԸԳՀ-ի կիրարկման մոնիթորինգի և սոցիալական ու



գրադվածության քաղաքականության հարցերում մասնակցությունն ապահովելու նպատակով:

- Պարտադիր դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների վաղ փուլի ներգրավումը հաշմանդամության իրավունքներին, գրադվածությանը և սոցիալական պաշտպանությանը վերաբերող բոլոր իրավական և քաղաքական փաստաթղթերի մշակման գործընթացներում: Խորհրդակցությունները չպետք է սահմանափակվեն միայն վերջնական նախագծերի քննարկմամբ, այլ պետք է սկսվեն հայեցակարգի մշակման փուլից և շարունակվեն ամբողջ գործընթացի ընթացքում:
- Ինստիտուցիոնալացնել պետական մարմինների և հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների միջև համագործակցությունը՝ փոխըմբռնման հուշագրերի, տարեկան ներգրավվածության ծրագրերի և համատեղ նախաձեռնությունների միջոցով: Կառավարական գերատեսչությունները պետք է ունենան պաշտոնական շփման ցուցակներ և երկխոսության օրացույցներ՝ կանոնավոր և ներառական մասնակցությունն ապահովելու համար:
- Ապահովել, որ բոլոր հանրային խորհրդակցությունները համապատասխանեն մատչելիության չափանիշներին՝ ներառյալ հայերեն ժեստերի լեզվով թարգմանությունը, տարածքների մատչելիությունը կամ առցանց ձևաչափերի մատչելիությունը, ինչպես նաև հեշտ ընթերցվող և էկրանի ընթերցիչի համար հարմար նյութերի առկայությունը: Ծանուցումները պետք է տարածվեն նախապես և մի քանի ձևաչափերով:
- Առանձին բյուջետային տող և աջակցման մեխանիզմ՝ նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների կարողությունների զարգացման համար՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ Մասնակցային և բաց կառավարման հարցերով վարչության ներքո: Սա պետք է ներառի վերապատրաստումներ՝ ՀԸԳՀ-ի մոնիթորինգի, ԵՄ քաղաքականության մեխանիզմների, իրավական գրագիտության և հանրային ներգրավման ռազմավարությունների թեմաներով:
- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների մասնակցությունը սոցիալական երկխոսության ավելի լայն մեխանիզմներում, օրինակ՝ Հանրապետական եռակողմ հանձնաժողովում: Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները պետք է ստանան պաշտոնական հրավերներ և հնարավորություն ունենան մասնակցելու ներառական գրադվածության, աշխատանքային պայմանների և սոցիալական պաշտպանության բարեփոխումների վերաբերյալ քննարկումներին:
- Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց հայաստանյան կազմակերպությունների և ԵՄ անդամ պետությունների կամ Արևելյան գործընկերության երկրների գործընկեր կազմակերպությունների միջև կառուցվածքային գործընկերային ուսուցման և փորձի փոխանակման ծրագրերին: Այս փոխանակումները պետք է կենտրոնանան ՀԸԳՀ-ի մոնիթորինգի, քաղաքականության շուրջ երկխոսության և հաշմանդամության խնդիրները հաշվի առնող ներառող զարգացման ռազմավարությունների իրականացման վրա:



Արդարադատության նախարարությանը

Մակարդակ. ինստիտուցիոնալ

- Բարելավել e-draft.am հարթակի գործառնություններն ու մատչելիությունը՝ այն համապատասխանեցնելով համընդհանուր չափանիշներին: Սա ներառում է պարզ լեզվով և մատչելի ձևաչափերով նյութերի տրամադրումը, ինչպես նաև խորհրդակցությունների ժամկետների երկարաձգումը՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ մասնակցությունը:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

ՀԸԳՀ-ի համապատասխան դրույթները

ՀԸԳՀ 85-րդ հոդվածի «i» ենթակետում նշվում է.

«Տեղեկությունների և լավագույն գործելակերպի փոխանակման վրա հիմնված համագործակցությունը կարող է ընդգրկել հետևյալ ոլորտներում հասցեագրման ենթակա որոշակի թվով հարցեր՝ (i) կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խթանում»:

ՀԸԳՀ 88-րդ հոդվածում նշվում է.

«Կողմերը պետք է խթանեն կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը և խրախուսեն պատասխանատու այնպիսի գործարար գործելակերպը, ինչպիսին է Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀՀՄ ուղեցույցներով, ՄԱԿ-ի Գլոբալ Կոմպակտ նախաձեռնությամբ, ԱՄԿ-ի՝ բազմազգ ձեռնարկություններին և սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագրով և ISO 26000-ով խրախուսվող գործելակերպը»:

Հիմնական բացահայտումներ

Հայաստանում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) մասին հատուկ օրենք գոյություն չունի, իսկ այս ոլորտում մասնավոր հատվածի մասնակցությունը հիմնականում տեղի է ունենում կամավորության սկզբունքով: Կառավարությունը կազմակերպությունների կողմից պատասխանատու գործելակերպի որդեգրումը խթանող համակարգված քաղաքականության շրջանակ չի ստեղծել, ԿՍՊ սկզբունքներն էլ չեն ինտեգրվել կորպորատիվ կառավարման պարտադիր պահանջներում: Եթե Հայաստանում գործող որոշ անդրազգային ընկերություններ հետևում են միջազգային ԿՍՊ շրջանակներին, տեղական ընկերությունները (հատկապես՝ փոքր և միջին ձեռնարկությունները) չունեն երկարաժամկետ սոցիալական պատասխանատվության նախաձեռնություններում ներգրավվելու կառուցվածքային խթաններ: Արդյունքում՝ ԿՍՊ-ն մնում է պատահական բնույթի գործունեություն, որը հիմնականում պայմանավորված է բարեգործական նվիրատվություններով՝ կորպորատիվ ռազմավարություններում ներդրված լինելու փոխարեն:

Կորպորատիվ բարեգործությունը ԿՍՊ-ի ամենաակնառու ձևերից մեկն է Հայաստանում, սակայն մի շարք խոչընդոտներ սահմանափակում են դրա ազդեցությունը: Բարեգործական գործունեությամբ զբաղվող բիզնեսները նշանակալի հարկային արտոնություններ չեն ստանում, իսկ կորպորատիվ նվիրատվությունները չեն հանվում հարկվող եկամտից: Սա խոչընդոտում է ընկերություններին երկարաժամկետ սոցիալական նախաձեռնություններ իրականացնելուց, մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և ներառական զբաղվածությունը: Բնաիրային նվիրատվությունների հարկումն ավելի է սահմանափակում բիզնեսների՝ սոցիալական

նկատառումներով ապրանքներ և ծառայություններ նվիրաբերելու պատրաստակամությունը⁵⁶:

Թեև «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը⁵⁷ իրավական հիմք է ապահովում կորպորատիվ նվիրատվությունների համար, այն բարեգործական նվիրատվությունները բացահայտ կերպով չի կապում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՄՊ) ավելի լայն հանձնառությունների հետ և չի սահմանում կառուցվածքային քաղաքականության շրջանակ կամ մոնիթորինգի մեխանիզմներ՝ կորպորատիվ ներդրումների ազդեցությունը խոցելի խմբերի վրա գնահատելու նպատակով:

Հատուկ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները խթանող ԿՄՊ նախաձեռնությունները համակարգված կերպով խրախուսելու կառավարության ջանքերի վերաբերյալ որևէ տեղեկատվություն հայտնի չէ⁵⁸: Թեև որոշ բիզնեսներ աջակցում են հաշմանդամության ոլորտին առնչվող նախաձեռնություններին, առկա չէ կառուցվածքային քաղաքականություն, որը կխթանի մասնավոր հատվածին ներդնել հաշմանդամություն ներառող գործելակերպ՝ զբաղվածության, ծառայությունների մատուցման կամ մատակարարման շղթայի կառավարման ոլորտներում:

ԿՄՊ-ի մասին հանրային իրազեկվածությունը սահմանափակ է, իսկ պատասխանատու գործելակերպով աչքի ընկնող բիզնեսները առանձնահատուկ ճանաչման չեն արժանանում: Պետականորեն սահմանված մրցանակներ, վարկանիշներ կամ խթանման ծրագրեր գոյություն չունեն, որոնք կխրախուսեն բիզնեսներին իրենց գործունեության մեջ ներառել ԿՄՊ-ն: Չկա նաև մասնավոր հատվածի համար սահմանված պարտադիր պահանջ՝ հրապարակելու իրենց սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ տեղեկատվություն, խնդիր է մնում նաև մատակարարման շղթայի թափանցիկության հարցը: Թեև ՀԸԳՀ-ն հստակորեն անդրադառնում է Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ ուղեցույցներին⁵⁹, ՄԱԿ-ի Գլոբալ Կոմպակտ նախաձեռնությանը⁶⁰, ԱՄԿ-ի՝ բազմազգ ձեռնարկություններին և

⁵⁶ «Հայաստանում բարեգործության ոլորտի բարեփոխումների քաղաքականության փաստաթուղթ. եզրակացություններ և առաջարկներ», ՀԿ կենտրոն, 2024 թ. հոկտեմբեր, <https://ngoc.am/wp-content/uploads/2024/10/12.07-%D4%B2%D5%A1%D6%80%D5%A5%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%83%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%A9%D5%B8%D6%82%D5%B2%D5%A9.pdf>:

⁵⁷ «Բարեգործության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2002 թ. հոկտեմբերի 8-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=43682>:

⁵⁸ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, *պաշտոնական նամակ N 2Մ/2Մ-2/7113-2025*, 2025թ.:

⁵⁹ *Բազմազգ ձեռնարկությունների համար պատասխանատու գործարար վարքագծի վերաբերյալ ՏՀԶԿ ուղեցույցներ*, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), 2023 թ., <https://www.oecd.org/publications/oecd-guidelines-for-multinational-enterprises-on-responsible-business-conduct-81f92357-en.htm>.

⁶⁰ ՄԱԿ-ի Գլոբալ Կոմպակտ նախաձեռնության մասին, հասանելի է 2025 թ. ապրիլի 17-ին, <https://unglobalcompact.org/about>.

սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագրին⁶¹ և ISO 26000 ստանդարտին⁶², այս շրջանակները Հայաստանում պաշտոնական թարգմանությամբ առկա չեն⁶³ և լայնորեն չեն կիրառվում, ինչի հետևանքով դրանք մնում են դժվար հասանելի բիզնեսների, քաղաքականություն մշակողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար:

Կառուցվածքային ազգային ԿՄՊ ռազմավարության բացակայության պայմաններում կորպորատիվ սոցիալական ակտիվությունը ունի հատվածական բնույթ՝ քիչ կապ ունենալով սոցիալական համախմբվածության և կայուն տնտեսական զարգացման վերաբերյալ կառավարության ավելի լայն քաղաքականության հետ:

Եզրակացություններ և առաջարկություններ

Չնայած ՀԸԳՀ-ի շրջանակներում կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը խթանելու և այն միջազգային չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ Հայաստանի ստանձնած պարտավորություններին՝ ԿՄՊ-ն ներկայումս մնում է հատվածական, չկարգավորված և հիմնականում բարեգործական բնույթ կրող գործընթաց: ԿՄՊ ոլորտում չկա ազգային օրենսդրական կամ ռազմավարական շրջանակ, և որևէ պետական մարմին պատասխանատու չէ մասնավոր հատվածի ներգրավվածության համակարգման կամ մոնիթորինգի համար՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը խթանելու հարցում: Այդպիսի կառավարման բացակայությունը սահմանափակում է պատասխանատու գործարար սկզբունքների զարգացումը և խոչընդոտում ԿՄՊ-ի ինտեգրմանը Հայաստանի՝ ներառական և կայուն տնտեսական զարգացման խթանմանն ուղղված ավելի լայն ջանքերում:

ՀԸԳՀ-ում ներառված կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վերաբերյալ դրույթները գործնականում կիրառելու և հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանն ուղղված կորպորատիվ ակտիվությունը խրախուսելու համար առաջարկվում է ձեռնարկել հետևյալ գործողությունները.

ՀՀ կառավարությանը (Էկոնոմիկայի նախարարության ղեկավարման ներքո՝ աշխատանքի և սոցիալական հարգերի նախարարության ու մասնավոր հատվածի ներգրավմամբ)

Մակարդակ. օրենսդրություն, քաղաքականության իրականացում և ինստիտուցիոնալ համակարգում

⁶¹ ԱՄԿ-ի՝ բազմազգ ձեռնարկություններին և սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագիր, Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ), 2023 թ. մարտի 24, <https://www.ilo.org/publications/tripartite-declaration-principles-concerning-multinational-enterprises-and-3>.

⁶² ISO 26000:2010 – Սոցիալական պատասխանատվության ուղեցույց, Ստանդարտացման միջազգային կազմակերպություն (ISO), 2010 թ. նոյեմբեր, <https://www.iso.org/standard/42546.html>:

⁶³ Ստանդարտների կատալոգ, Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, հասանելի է 2025 թ. ապրիլի 17-ին, <https://www.armstandard.am/en/standarts>:



- Նշանակել պետական մարմին, որը կհամակարգի ԿՄՊ քաղաքականության մշակումը և իրագործումը՝ ապահովելով միջգերատեսչական համագործակցություն: Այս գործառնությունը կարող է վերապահվել Էկոնոմիկայի նախարարությանը՝ վերջինիս կազմում ստեղծելով ԿՄՊ-ի և բիզնեսի ու մարդու իրավունքների հարցերով պատասխանատու հատուկ ստորաբաժանում կամ համակարգող կենտրոն:
- Մշակել և ընդունել ազգային ԿՄՊ ռազմավարություն, որը հստակորեն կսահմանի կառավարության ակնկալիքները մասնավոր հատվածից, կուրվագծի ԿՄՊ ներգրավվածության առաջնահերթ ոլորտները (ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը) և կսահմանի մոնիթորինգի, գնահատման և հաշվետվողականության մեխանիզմները:
- Փոփոխել «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը կամ ընդունել առանձին ԿՄՊ օրենսդրություն՝ ստեղծելով կամավոր նվիրատվությունների շրջանակից հեռու գնացող և կորպորատիվ պատասխանատվությունը սոցիալական զարգացման ավելի լայն նպատակների հետ կապող իրավական հիմք:
- Ներդնել ազգային մրցանակներ կամ վարկանշային համակարգեր՝ ներառական բիզնեսներին և ԿՄՊ չեմպիոններին ճանաչման արժանացնելու նպատակով:
- Ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանը՝ ԿՄՊ օրակարգի ձևավորման, ձեռնարկություններին ներառական գործելակերպի վերաբերյալ խորհրդատվության տրամադրման և կորպորատիվ գործունեության սոցիալական ազդեցության մոնիթորինգի գործընթացներում: Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները պետք է դիտարկվեն որպես ազգային ԿՄՊ ռազմավարության զարգացման հիմնական շահառուներ:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը (աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համակարգմամբ)

Մակարդակ՝ գիտելիքի տարածում և ԿՄՊ ինտեգրում

- Թարգմանել և տարածել ԿՄՊ ոլորտին առնչվող միջազգային շրջանակային փաստաթղթերը, որոնք հիշատակված են ՀԸԳՀ-ում, այդ թվում՝ Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ ուղեցույցները, ՄԱԿ-ի Գլոբալ Կոմպակտ նախաձեռնության սկզբունքները, ԱՄԿ-ի եռակողմ հռչակագիրը և ISO 26000-ը: Այս փաստաթղթերը պետք է հասանելի լինեն հայերենով և հարմարեցված լինեն՝ տեղական բիզնեսի, հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ների) գործնական օգտագործման համար:
- Խրախուսել հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառական կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը՝ նպատակային ուղեցույցի և ներգրավման միջոցով: Ազգային ԿՄՊ ռազմավարությունը պետք է ներառի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող կոնկրետ նպատակներ, ինչպիսիք են ներառական զբաղվածությունը, ծառայությունների մատչելիությունը, արտադրանքի համընդհանուր և դիզայնը և հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին կամ սոցիալական ձեռնարկություններին աջակցությունը:



- Սահմանել ԿՍՊ վերաբերյալ կամավոր հաշվետվության մեխանիզմներ՝ երկարաժամկետ հեռանկարում նպատակ ունենալով ներմուծել պարտադիր հաշվետվությունների համակարգ խոշոր ընկերությունների համար՝ իրենց սոցիալական և շրջակա միջավայրի ազդեցությունների վերաբերյալ:
- Խթանել պետություն-մասնավոր գործընկերությունները, որոնք կորպորատիվ ռեսուրսները կկապեն ազգային զարգացման նպատակների հետ, ներառյալ ՀԸԳՀ-ի և ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակներում ստանձնված պարտավորությունները: Այս գործընկերությունները կարող են աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ծրագրերին, մատչելի ենթակառուցվածքների զարգացմանը կամ աջակցող տեխնոլոգիաների ոլորտում նորարարություններին:

ՀՀ Ֆինանսների նախարարությանը (Էկոնոմիկայի նախարարության հետ համակարգմամբ)

Մակարդակ՝ ֆինանսական խթաններ

- Սահմանել հարկային արտոնություններ և ճանաչման մեխանիզմներ այն ձեռնարկությունների համար, որոնք ներգրավված են նշանակալի և երկարաժամկետ ԿՍՊ նախաձեռնություններում: Դրանք կարող են ներառել հարկային զեղչեր աշխատանքի ընդունման ներառական գործելակերպի, խելամիտ հարմարեցումների ապահովման, ինչպես նաև սոցիալական նպատակներով ապրանքների և ծառայությունների նվիրատվության համար:



7. Վերջնական եզրակացություններ

Սույն մոնիթորինգի զեկույցը ցույց է տալիս, որ թեև Հայաստանը բարեփոխումներ է ձեռնարկել սոցիալական պաշտպանության, զբաղվածության, շահագրգիռ կողմերի ներգրավման և կորպորատիվ պատասխանատվության ոլորտներում, հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը շարունակում է ունենալ հատվածական բնույթ և անհամատեղելի է ՀԸԳՀ 84-88-րդ հոդվածներում և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում նշված պարտավորությունների հետ: Հաշմանդամության հարցերը հիմնականում դիտարկվում են ընդհանրական ձևով կամ առանձին դրույթների մակարդակով՝ պետական քաղաքականություններում, իրականացման շրջանակներում կամ մոնիթորինգի համակարգերում համակողմանիորեն ներառվելու փոխարեն:

Վերլուծության շրջանակներում դիտարկված բոլոր ոլորտներում ի հայտ են եկել կրկնվող բացեր և համակարգային խոչընդոտներ, ներառյալ՝ հաշմանդամության վերաբերյալ հուսալի և ապախոշորացված տվյալների մշտական բացակայությունը, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների սահմանափակ մասնակցությունը քաղաքականության մշակման գործընթացներում, օրենսդրական պարտավորությունների և դրանց գործնական կիրառման միջև առկա հակասությունները, ինչպես նաև պետական կառույցների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի միջև համակարգման պակասը: Չնայած ՀԸԳՀ-ն ունի նշանակալի փոխակերպիչ ներուժ՝ դրա մեխանիզմները դեռևս լիովին չեն օգտագործվում որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները համակարգված և կայուն կերպով առաջ մղելու գործիքներ:

Վերլուծությունը հստակ ցույց է տալիս համապարփակ մոտեցման անհրաժեշտությունը, որը պետք է ընդգրկի քաղաքականության բոլոր ոլորտները և նպաստի երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոփոխություններին: Հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը պետք է դառնա ՀԸԳՀ-ի կիրարկման հիմնական ուղղություն՝ սկսած քաղաքականության մշակման ամենավաղ փուլերից մինչև դրա կիրարկման և գնահատման գործընթացներ: ՀԸԳՀ-ից բխող օրենսդրական բարեփոխումները պետք է համահունչ լինեն ինչպես Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային, այնպես էլ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքին: Այս համահունչությունն անհրաժեշտ է ապահովել քաղաքականության վերանայման գործընթացների միջոցով, որոնք նպատակ ունեն բացահայտելու անհամապատասխանությունները և ժամանակին իրականացնել ներդաշնակեցում:

Այնուհանդերձ, կենսական անհրաժեշտություն է նաև հաշմանդամության վերաբերյալ ապախոշորացված տվյալների հավաքագրման և օգտագործման հզոր և հուսալի համակարգի ձևավորումը: Այն պետք է համակարգվի համապատասխան պետական մարմինների միջև, հիմնված լինի միջազգային ճանաչում ունեցող գործիքների վրա և կարողանա արձանագրել միջոլորտային գործոնները, այդ թվում՝ տարիքը, սեռը, հաշմանդամության տեսակը և աշխարհագրական տարածքը: Առանց նման տվյալների ենթակառուցվածքի՝ ներառական քաղաքականությունը կշարունակի հիմնվել ենթադրությունների, այլ ոչ՝ ապացույցների վրա:

Հավասարապես կարևոր է նաև քաղաքականության մշակման բոլոր փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց բովանդակային մասնակցության ինստիտուցիոնալացումը: Այս մասնակցությունը պետք է ապահովի վաղ և շարունակական ներգրավվածություն, բավարար ռեսուրսներ և մատչելի խորհրդատվական գործընթացներ: Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները պետք է ճանաչվեն ոչ միայն



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

որպես շահագրգիռ կողմեր, այլև որպես բարեփոխումների նախագծման, իրականացման և մոնիթորինգի լիիրավ գործընկերներ: Սա ենթադրում է, որ մասնակցությունը պետք է արտացոլի հաշմանդամություն ունեցող անձանց բազմազանությունը՝ ներառյալ այն խմբերը, որոնք հաճախ դուրս են մնում ուշադրությունից, ինչպես՝ հաշմանդամություն ունեցող փախստականները, հաշմանդամություն ունեցող երեխաները, ինչպես նաև հոգեւոցիալական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք:

Ամփոփելով՝ հատվածական ջանքերից դեպի ՀԸԳՀ-ի իրապես ներառական կիրառում անցումը պահանջում է թե՛ մտածելակերպի, թե՛ ինստիտուցիոնալ գործելակերպի վերափոխում: Այդ փոփոխությունը պետք է հիմնված լինի մարդու իրավունքների, հավասարության և արժանապատվության սկզբունքների վրա՝ ապահովելով, որ ոչ ոք չմնա անտեսված, երբ Հայաստանը շարունակում է իր ճանապարհը դեպի Եվրոպական միության հետ ավելի խորը համագործակցություն:

9. Հավելվածներ

Հավելված 1. Օգտագործված ազգային օրենսդրական փաստաթղթերի ցանկ

«Խելամիտ հարմարեցումներ սպահովելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022 թ. օգոստոսի 11-ի N 1265-Ն որոշում (հայերեն)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167278>:

«Քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանման կատարման և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1308-Ն որոշում (հայերեն) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=102803>:

«Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների և թաղման նպաստի չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2013 թ. դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=179721>:

«Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թ. դեկտեմբերի 27-ի N 2083-Լ որոշում (հայերեն)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=201615>:

«Զբաղվածության խթանման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 23-ի N 242-Լ որոշում (հայերեն)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174467>:

ՀՀ կառավարության 2025 թ. հունվարի 9-ի N 27-Ն որոշում (հայերեն)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205191>:

«Ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 1-ի N 460-Լ որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151281>:

«Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությանը և սոցիալական ներգրավվածության մասին զեկույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 8-ի նիստի արձանագրությունից քաղվածք N 45 (հայերեն)
<https://www.irtek.am/views/act.aspx?aid=68183>:

«Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքների շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն սպահովող անձանց ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թ. մայիսի 13-ի N 691-Լ որոշում (հայերեն)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային Էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2019 թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153164>:

ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 2004 թ. նոյեմբերի 9-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199957>:

«Բարեգործության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2002 թ. հոկտեմբերի 8-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=43682>:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2013 թ. դեկտեմբերի 11-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199715>:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, Գլուխ 2, ընդունվել է 2018 թ. մարտի 21-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=187324>:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2024 թ. հոկտեմբերի 24-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199657>:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2013 թ. դեկտեմբերի 12-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199737>:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2021 թ. մայիսի 5-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196661>:

««Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2024 թ. հոկտեմբերի 24-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=199679>:

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի 2024 թ. դեկտեմբերի 26-ի N 1204-Լ որոշում (հայերեն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=201524>:

«Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2008 թ. փետրվարի 25-ի N 98 որոշում (հայերեն) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=197606>:

Մի կողմից՝ Եվրոպական միության և Ատոմային Էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, Եվրոպական միության



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

պաշտոնական տեղեկագիր, L 23/4, 2018 թ. հունվարի 26, https://eur-lex.europa.eu/eli/agree_international/2018/104/oj:



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

Հավելված 2. Մոնիթորինգի մատրից

Մոնիթորինգի հարց	Գնահատման չափանիշ	Ցուցիչ	Տեղեկատվության աղբյուրներ
1. Աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում (Հոդված 85a)			
1.1. Արդյոք աղքատության կրճատման քաղաքականությունը ներառակա՞ն է հաշմանդամություն ունեցող անձանց և խոցելի խմբերի համար:	1.1. Քաղաքականությունը հստակ ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց հանդիպող խոչընդոտների վերացմանը և սոցիալական համերաշխության խթանմանը:	- Որքանո՞վ է քաղաքականությունը հստակորեն նույնականացնում հաշմանդամություն ունեցող անձանց հանդիպող խոչընդոտները կրթության, զբաղվածության և առողջապահության նման առանցքային ոլորտներում և արձագանքում դրանց: - Որքանո՞վ է քաղաքականությունն արտացոլում ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված սկզբունքները և ՀԸԳՀ-ի 85a հոդվածում նշված պարտավորությունները:	- Պաշտոնական փաստաթղթեր - Սոցիալական պաշտպանության ծրագրի տվյալներ - Տեղական և միջազգային զեկույցներ - Հարցազրույցներ
1.2. Որքանո՞վ են սոցիալական ապահովության համակարգերն ընդգրկում հաշմանդամություն ունեցող անձանց	1.2. Սոցիալական ապահովության համակարգերը հաշվի են առնում հաշմանդամություն ունեցող անձանց	Սոցիալական ապահովության համակարգերը ներառում են հստակ դրույթներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացած եզակի խնդիրները լուծելու համար (օրինակ՝ մատչելիություն, իրավասության	- Պաշտոնական փաստաթղթեր - Սոցիալական պաշտպանության ծրագրի տվյալներ



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»

ENI/2023/442-873

ունեցող կարիքները:	անձանց	առանձնահատուկ խնդիրները և ապահովում են համապատասխան ծածկույթ:	չափանիշներ և նպատակային նպաստներ): Սոցիալական ապահովության համակարգերի համապատասխանության աստիճանը ՀԸԳՀ-ի (Հոդված 85ա) և ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին՝ ապահովելով ապախտրականություն, մատչելիություն և ներառում:	- Տեղական և միջազգային զեկույցներ - Հարցազրույցներ
2. Զբաղվածություն և ներառական աշխատաշուկաներ (Հոդված 85d)				
2.1. Որքանով են աշխատաշուկայի բարեփոխումները նպաստում հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը:	2.1. Զբաղվածության քաղաքականությունը հստակորեն խթանում է ապախտրականությունը և ապահովում է խելամիտ հարմարեցումներ:	- Զբաղվածության քաղաքականությունը ներառում է հակախտրականության մասին հստակ դրույթներ, որոնք պաշտպանում են հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի դիմելու և անցնելու ընթացքում, ինչպես նաև աշխատավայրում: - Քաղաքականությունը պահանջում և նպաստում են հաշմանդամություն ունեցող աշխատողների համար խելամիտ հարմարեցումների ապահովմանը, ինչպիսիք են՝ աջակցող սարքերը, ճկուն աշխատանքային	- Պաշտոնական փաստաթղթեր - Զբաղվածության ծրագրի տվյալներ - Տեղական և միջազգային զեկույցներ - Հարցազրույցներ	



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»

ENI/2023/442-873

		պայմանները կամ մատչելի աշխատատեղերը: • Զբաղվածության քաղաքականությունը համահունչ է ՀԸԳՀ-ի (Հոդված 85d) և ՄԱԿ-ի կոնվենցիայի ներքո ստանձնված պարտավորություններին՝ ապահովելով զբաղվածության հնարավորությունների հավասար մատչելիություն և առավել ընդգրկում աշխատաշուկաներ:	
2.2. Արդյոք հաշմանդամություն ունեցող անձինք ստանո՞ւմ են աջակցություն աշխատանքի ընդունվելու և այն պահպանելու հարցում:	2.2. Հաշմանդամություն ունեցող անձանց համար առկա են նպատակային աջակցության ծրագրեր (օրինակ՝ ուսուցում, սուբսիդիաներ):	• Պետական ծրագրերի փաստացի առկայություն (օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, մենթորություն կամ սուբսիդիաներ), որոնք հատուկ մշակված են աշխատանքի ընդունվելու և այն պահպանելու հարցում հաշմանդամություն ունեցող անձանց աջակցելու համար: • Զբաղվածության աջակցման ծրագրերը մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար, ներառյալ ֆիզիկական, տեղեկատվական և ընթացակարգային մատչելիությունը:	• Պաշտոնական փաստաթղթեր • Զբաղվածության ծրագրի տվյալներ • Տեղական և միջազգային զեկույցներ • Հարցազրույցներ
3. Սոցիալական երկխոսության խթանում և սոցիալական գործընկերների մասնակցության ընդլայնում (Հոդված 85g)			



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»

ENI/2023/442-873

3.1. Արդյոք հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները, ակտիվորեն մասնակցում են քաղաքականության մշակմանը:	3.1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ պարբերաբար անցկացվում են խորհրդակցություններ, որոնց արդյունքներն արտացոլվում են բարեփոխումներում:	• Քաղաքականության մշակման գործընթացներում (ներառյալ բարեփոխումների մշակումը, իրականացումը և գնահատումը) հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ կանոնավոր խորհրդակցական հանդիպումների կամ ֆորումների անցկացման փաստեր: • Քաղաքականության նախագծերում և վերջնական բարեփոխումների հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների կարծիքների և առաջարկությունների ներառման մակարդակը՝ փաստաթղթավորված փոփոխություններով կամ հաստատումներով: • Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների համար քաղաքականության մշակման գործընթացների մատչելիության փաստի առկայություն, ներառյալ խելամիտ հարմարեցումների ապահովումը (օրինակ՝ ժեստերի լեզվով թարգմանություն, փաստաթղթերի և տարածքների մատչելիություն):	• Պաշտոնական փաստաթղթեր • Լրատվական հրապարակումներ • Տեղական և միջազգային զեկույցներ • Հարցազրույցներ
---	---	--	--



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»

ENI/2023/442-873

3.2. Արդյո՞ք հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների կարողությունները զարգացած են՝ մասնակցությունը բարելավելու համար:	3.2. Անցկացվում են կարողությունների զարգացման նախաձեռնություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին հզորացնելու համար:	- Կառավարության կողմից իրականացվող նախաձեռնությունների փաստացի առկայություն, որոնք ուղղված են ՀԸ-ների տեխնիկական, կազմակերպչական կամ ջատագովության կարողությունների ամրապնդմանը (օրինակ՝ վերապատրաստում, ֆինանսավորում, մենթորություն): - Կարողությունների զարգացման ծրագրերի արդյունավետության վերաբերյալ համանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետադարձ կապն առ այն, որ դրանք նպաստել են քաղաքականության մշակմանը և շահերի պաշտպանությանը մասնակցելու իրենց կարողությունների բարելավմանը:	- Պաշտոնական փաստաթղթեր - Լրատվական հրապարակումներ - Տեղական և միջազգային զեկույցներ - Հարցազրույցներ
4. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն (ԿՍՊ) (Հոդված 85i)			
4.1 Արդյո՞ք մասնավոր հատվածի ընկերությունները խրախուսվում են ձեռնարկել ԿՍՊ նախաձեռնություններ՝	4.1. Կառավարությունն ակտիվորեն խթանում և խրախուսում է ներառման և մատչելիության հետ կապված կորպորատիվ սոցիալական	Քաղաքականության կամ ծրագրերի, կառավարության կողմից ղեկավարվող արշավների, ուղեցույցների կամ նախաձեռնությունների փաստացի առկայություն, որոնք խրախուսում են մասնավոր ընկերություններին ներդնել	- Պաշտոնական փաստաթղթեր - Լրատվական հրապարակումներ - Տեղական և միջազգային զեկույցներ



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»

ENI/2023/442-873

ներառականությունն ու մատչելիությունը խթանելու համար:	պատասխանատվության գործելակերպը:	ներառման և մատչելիության վրա կենտրոնացած ԿՍՊ գործելակերպեր: Կառավարության կողմից տրամադրվող ֆինանսական կամ ոչ ֆինանսական խթանների (օրինակ՝ հարկային արտոնություններ, հանրային ճանաչում) առկայություն՝ խրախուսելու մասնավոր ընկերություններին իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար օգտակար ԿՍՊ նախաձեռնություններ:	Հարցազրույցներ
--	---------------------------------	---	--